

Կայուն Չարգացման գեկույց 2019

Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ
Քամփնի Արմենիա



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4 ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

6 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

9 ԿՈԿԱ-ԿՈՒԱ ՀԲՔ ԱՐՄԵՆԻԱ

10 Ռազմավարություն և տեսլական

13 Կոռուպցիայի դեմ պայքար

14 Մեր արտադրանքները

16 Արտադրանքի որակ և սպառողի անվտանգություն

18 Մեր մատակարարման շղթան

21 ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

31 ՄԵՐ ԹԻՄԸ

41 ԱՇԽԱՏԱԿԱՅՐՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ և ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

47 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

57 ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

65 ԶԵԿՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

70 GRI ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

76 ՆԵՐԴՐՈՒՄ ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

78 ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ



Մեր ընկերության տեսլականը զարգանում է՝ նպատակ ունենալով դառնալ առաջատար գործընկեր 24/7 խմիչքների բիզնեսում: Այն հնարավոր է աճելով մեր հաճախորդների հետ և համոզված լինելով, որ մենք ունենք խմիչք՝ յուրաքանչյուր սպառողի համար շուրջօրյա: Մենք գործունեություն ենք ծավալում արագ զարգացող արդյունաբերության մեջ և այդպիսով հաղթանակում ենք մեր ներկա պորտֆոլիոյով և նոր շարքեր ներկայացնելով, ինչպիսիք են՝ Պրեմիում ալկոհոլային խմիչքները, որոնք կօգնեն մեզ օգտագործել արագացված աճի համար անհրաժեշտ հավելյալ հնարավորությունները: Մենք գործունեություն ենք ծավալում այս բիզնեսում՝ միաժամանակ զարգացնելով մեր ժողովրդին, պատասխանատու և կայուն կերպով վստահություն ստեղծելով, և նպաստելով մեր համայնքների հարստացմանը և շրջակա միջավայրի պաշտպանությանը:

2019 թվականին մենք հասանք շուկայում գազավորված ըմպելիքների՝ մեր պորտֆոլիոյի զգալի առկայությանը՝ մեր սպառողներին առաջարկելով ապրանքների բազմազան ընտրություն: 2019 թվականը հաջողության ևս մեկ տարի էր՝ «ոչ ալկոհոլային, խմելու համար պատրաստ» կատեգորիաների խմիչքների մեր պորտֆոլիոյի ընդլայնման համար նպատակային նորարարություններով, ինչպիսիք են «FuzeTea» ապրանքանիշի կողմից առաջարկվող թեյի և մրգերի արտասովոր խառնուրդներ, հյութերի նոր շարք և նոր ապրանքատեսակներ, օրինակ՝ «Կոկա-Կոլա գումարած սուրճ» գազավորված ըմպելիքը: Մենք հաջողությամբ գոհացրել ենք մեր սպառողներին Ամանորի տոնակատարությունների և ամառային արձակուրդների ընթացքում համազգային ակցիաներով և զվարճալի հաղորդակցություններով: Ավելին, տարին նշանավորվեց տարածաշրջանում առաջինը հանդիսացող Կոկա-Կոլա հաճախորդների կենտրոնի բացմամբ, որը թույլ է տալիս ապրանքանիշի սիրահարներին տեսնել աշխարհը Կոկա-Կոլա-ի պրիզմայով, ծանոթանալ մեր պատմությանը և առաջին ձեռքից ուսումնասիրել ընկերության նորարարական տեխնոլոգիաները:

Կայունության թիրախներն ու պարտավորությունները ներառված են մեր ընկերության առաքելության և արժեքների մեջ: Կյանքի կոչելով տարբեր կայուն նախաձեռնություններ և ծրագրեր, ինչպես նաև տարեցտարի առաջընթաց գրանցելով՝ մենք գիտակցում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել մեր սոցիալական գործունեության և տնտեսական ազդեցության քանակական չափորոշիչներ և թիրախներ: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը, համաձայն հեղինակավոր «Dow Jones»-ի կայունության ցուցանիշի, ճանաչվել է եվրոպայի ըմպելիքներ արտադրող ամենակայուն ընկերությունը, և 9-րդ տարին անընդմեջ մենք տեղ ենք գտնում ամբողջ աշխարհի և եվրոպայի ըմպելիքների արտադրության առաջատար 3 ընկերությունների շարքում: Մենք ճանաչում ենք ստանում մեր ձեռքբերումների համար, որոնք կարող են նաև լինել կայունության առաջընթացի չափանիշ: Վերջին երեք տարիների ընթացքում ընկերությունն ունեցել է 29.5 մլն ՀՀ դրամ համախառն արժեքի ներդրում, որը կազմում է Հայաստանի ընդհանուր ՀԱԱ 0,21%-ը: Մեր ընկերության վճարած հարկերը կազմում էին պետական բյուջե վճարված ընդհանուր հարկերի 0,5%-ը: Որպես գլոբալ ձեռքբերումների մի մաս՝ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը, որպես առաջատար բիզնես, նույնպես նշանակալի ներդրում է ունեցել երկրի մակարդակով: Որպես օրինակ կարելի է մատնանշել աշխատանքի հնարավորությունների ստեղծումը, մասնավորապես ընկերության կողմից ուղղակիորեն ստեղծված յուրաքանչյուր աշխատատեղի հետևանքով ստեղծվել է 6 լոգսցիչ աշխատատեղ՝ այդպիսով ապահովելով 2,471 ուղղակի և անուղղակի աշխատանքի հնարավորություններ:

Ինչ վերաբերում է սոցիալական և բնապահպանական պատասխանատվությանը, «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»

ընկերությունը հայտարարել է հավակնոտ թիրախներ՝ շարունակելով իր ջանքերը կենտրոնացնել կայուն փաթեթավորման և վերամշակման, ածխածնի արտանետման նվազեցման վրա, ինչպես նաև երիտասարդության զարգացմանն ուղղված մի շարք նախաձեռնություններ իրականացնելու վրա: Ի պատասխան COVID-19 համավարակի՝ ընկերությունը «Կոկա-Կոլա» հիմնադրամի միջոցով ստեղծել է Հայաստանում աղետների դեմ պայքարի ծրագրեր՝ Եական արժեք ավելացնելով մեր համայնքի բարեկեցության նախաձեռնություններին: Երկրի տնտեսության զարգացմանը նպաստելուց բացի «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը հայտնի է նաև իր սոցիալապես պատասխանատու ընդարձակ գործունեությամբ՝ իրականացնելով համայնքների զարգացման տասնյակ նախաձեռնություններ: 2019 թվականի ընթացքում և 2020 թվականի վեց ամիսների ընթացքում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը սոցիալական ծրագրերում, ընդհանուր առմամբ, ներդրել է 87,600,609 ՀՀ դրամ: 2020 թվականին ներդրումների կեսից ավելին տրամադրվել է COVID-19 համավարակի ընթացքում համայնքների աջակցությանը, որը ֆինանսավորվել է «Կոկա-Կոլա» հիմնադրամի կողմից:

Մեր ընկերության վստահության ամենամեծ աղբյուրը մեր մարդկանց ուժն է, գիտելիքը, եռանդն ու մղումը: Բացերը հայտնաբերելու և վերացնելու համար մենք կարծում ենք, որ աճի և առաջընթացի հիմնական շարժիչներն են ազնվությունը և հրապարակայնությունը: Մենք շարունակում ենք մեր հաճախորդներին մատուցել բարձրորակ և անվտանգ ըմպելիքների լայն տեսականի նույնիսկ այս բարդ ժամանակահատվածում:

Վստահ ենք, որ մասնավոր հատվածի, պետական և հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքը համագործակցության ավելի մեծ հնարավորություններ կստեղծի՝ ավելի կայուն աշխարհ կառուցելու համար:

Մենք կշարունակենք աշխատել մեր շահակիցների հետ բնապահպանական հարցերի շուրջ և հնարավորություններ կփնտրենք դրական փոփոխություններ կատարելու համար: Մենք արել ենք բացառիկ աշխատանք՝ կատարելով մեր ստանձնած պարտավորությունները:

Մենք կհաղթահարենք հետհամավարակային աշխարհի կարճաժամկետ և երկարաժամկետ մարտահրավերները՝ օգտագործելով նոր թվային հնարավորություններ, որպեսզի պարզեցնենք մեր հաճախորդների հետ փոխհարաբերությունները և օպտիմալացնենք մեր աշխատակիցների ուսուցման փորձը:

Մենք առաջ ենք նայում՝ համոզված լինելով, որ, չնայած համավարակի համաաշխարհային մարտահրավերներին, աշխարհում և Հայաստանում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության աճի տարի է լինելու:

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ



ՄԵՐ ԲԻԶՆԵՍԸ

7% շահույթի աճ՝ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիայի» ապրանքատեսակների վաճառքից:

Ընդհանուր շահույթի **68%**-ը ստացվել է Հայաստանում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիայի» երևանում գտնվող գործարանում արտադրված ըմպելիքների վաճառքից:

Գնումների բյուջեի **33.5%**-ը ծախսվել է տեղական մատակարարների վրա:

Մատակարարների ընդհանուր թվի **83.2%**-ը տեղական մատակարարներ էին:

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ավագ ղեկավարների **64%**-ը ՀՀ քաղաքացիներ էին:

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիայի» բարձրագույն ղեկավարների **50%**-ը կանայք էին: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ձգտում է ամրապնդել գենդերային հավասարությունը:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ստեղծում է **ներառական աշխատանքային միջավայր**. 2019 թվականին ընկերության աշխատակիցների թվում էին հատուկ կարիքներ ունեցող 6 անձինք:

ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

16,8 միլիարդ դրամ՝ 2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ընդհանուր ներդրումը Հայաստանի ՀՆԱ-ում, որը կազմել է Հայաստանի ընդհանուր ՀՆԱ-ի **0.26%**-ը:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ստեղծած յուրաքանչյուր **1 դրամ ավելացված արժեքի** շնորհիվ Հայաստանի տնտեսությունում ստեղծվում է **2.3 դրամ համախառն ավելացված արժեք**:

2,471 աշխատատեղ՝ աշխատատեղերի ընդհանուր քանակը, որոնք «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությանն օգնել է պահպանել Հայաստանի տնտեսությունում, որը կազմում էր Հայաստանում ընդհանուր զբաղվածության **0.26%**-ը:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիայի» **1 աշխատակիցը 2019 թվականին 6 աշխատատեղի** աջակցություն է ապահովել Հայաստանի տնտեսությունում:

5.7 միլիարդ դրամ՝ ընդհանուր ներդրումը Հայաստանի բնակչության **աշխատանքային եկամուտներում**, որը ստեղծվել է «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիայի» կողմից 2019 թվականին:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության աշխատակիցների վարձատրության յուրաքանչյուր **1 դրամի** դիմաց Հայաստանի ամբողջ տնտեսությունում ապահովվել է **աշխատանքային եկամուտ 3.2 դրամի չափով**:

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կողմից **վճարված ընդհանուր հարկերի գումարը կազմել է 7.8 միլիարդ դրամ**, ինչը կազմում է Հայաստանի պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտների **0.53%**-ը:

Հայաստանի տնտեսությունում ստեղծվել է **1.3 դրամ հարկային վճար** «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կողմից յուրաքանչյուր **1 դրամ հարկային** վճարումների դիմաց:

2019 թվականին ընկերության **կապիտալ ներդրումները** կազմել են **1.3 միլիարդ դրամ**:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության **կապիտալ ներդրումները** Հայաստանում ընկերության ներկայության **ողջ ժամանակահատվածի ընթացքում** կազմել են **18.4 միլիարդ դրամ**:

ՄԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

25.3 միլիոն դրամ՝ 2019 թ.-ին սոցիալական ներդրումների ընդհանուր գումարը:

62.3 մլն դրամ՝ 2020 թ.-ի վեց ամիսների ընթացքում ներդրումները սոցիալական նախագծերում, որի կեսից ավելին COVID-19 համավարակի ընթացքում որպես աջակցություն տրամադրվել է համայնքներին:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը 2020 թվականի օգոստոսի դրությամբ

70,560 շիշ ջուր է նվիրաբերել առողջապահության ոլորտի աշխատողներին՝ COVID-19 համավարակի ընթացքում համայնքների աջակցելու համար:

Հայաստանի ամբողջ տարածքում

2648 երիտասարդ ներգրավվել է «Երիտասարդների հզորացում» նախագծում: 2018 թվականից մասնակիցների ընդհանուր թիվը հասել է **4748 երիտասարդի**:



ՄԵՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ

2019 թվականին վերամշակվել է առաջացած ամբողջ թափոնների քանակի **97.8%**-ը:

Ապակե շշերի **96%**-ը, որոնք ուղարկվել են շուկա, վերադարձվել են արտադրության մեջ կրկին օգտագործելու համար:

100 դպրոց և համալսարան ներգրավվել են կրթական բնապահպանական նախաձեռնության մեջ՝ համագործակցելով «Համայնքների կայուն զարգացման Նորարարական լուծումներ» նախաձեռնության հետ:

Տեղադրվել է **40 աղբաման**, և **20 տոննա** կոշտ թափոն հավաքվել են կրթական բնապահպանական նախաձեռնության շրջանակներում «Համայնքների կայուն զարգացման Նորարարական լուծումների» հետ համատեղ:

2,08 լիտր ջուր օգտագործվում էր 1 լիտր ըմպելիք արտադրելու համար: Սա 2019 թվականի **ջրի օգտագործման գործակիցն է**, որը 1,4%-ով ցածր էր 2018 թվականի ցուցանիշից:

0.60 սձ է ներգրկա օգտագործվում էր 1 լիտր ըմպելիք արտադրելու համար: Սա 2019 թվականի **էներգիայի ինտենսիվության գործակիցն է**, որը 3.4%-ով բարձր էր 2018 թվականի համեմատ, սակայն 4.8%-ով ցածր 2017 թվականի ցուցանիշի համեմատ:

56.06 գրամ CO₂ արտանետում արտադրված 1 լիտր ըմպելիքի դիմաց: Սա 2019 թվականին **ջերմոցային գազերի արտանետումների ինտենսիվությունն է**, ինչը 5.5%-ով ցածր է 2018 թվականի համեմատ:



ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԲԲ
ԱՐՄԵՆԻԱ



«Կոկա-Կոլա ՀԲԲ ՀԲԲ Արմենիա» ՓԲ ընկերությունն իր գործունեությունը ծավալում է որպես «Կոկա-Կոլա ՀԲԲ»-ի՝ Ուկրաինա, Մոլդովա և Հայաստան բիզնես միավորի մաս: Ընկերությունը «Կոկա-Կոլա» ընկերության շաղկապ գործընկերն է: «Կոկա-Կոլա» ընկերության գլխամասը գտնվում է Շվեյցարիայի Ցուրիք քաղաքում: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն օգտագործում է խտանյութերը և օշարակները վերջնական ապրանքանիշավորված ապրանքներն արտադրելու և փաթեթավորելու, ինչպես նաև հայաստանյան շուկայում վաճառելու և առևտրային գործընկերներին մատակարարելու համար:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ և ՏԵՍԼԱԿԱՆ

Շուկայում գործունեության ավելի քան 20 տարիների ընթացքում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն իր ուշադրության կենտրոնում է պահել կորպորատիվ պատասխանատվության և կայունության մշակույթի ինտեգրումը բիզնես ընթացակարգերի և որոշումների կայացման գործընթացում: Այդ իսկ պատճառով մեր շահակիցների համար երկարաժամկետ արժեք ստեղծելուն և միաժամանակ բացասական ազդեցությունը նվազեցնելուն ուղղված մեր նպատակասլաց ռազմավարություններն ու հանձնառությունների նախագծերը կառուցվելիս մենք կարևորում ենք բնապահպանական և սոցիալական հարցերը: Համոզվելու համար, որ մեր ռազմավարական գործունեությունը համաշխարհային միտումների կորի առջևում է, ընկերությունը պարբերաբար խորհրդակցում է իր շահակիցների հետ: Ընդհանուր առմամբ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»

ընկերության կայունության մոտեցումը հիմնված է երեք հիմնաքարերի վրա, որոնք են (1) առողջության և բարեկեցության խթանումը, (2) շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցումը և (3) համայնքային աջակցությունը:

Ընկերության կայուն զարգացման ռազմավարությունը մշակվել է 2010 թվականին՝ հիմնական թիրախ ունենալով մինչև 2020 թվականն արժեշրջայում ածխածնային արտանետումները նվազագույնի հասցնելը և արտադրության ժամանակ ջրի սպառման կրճատումը: Ռազմավարության նպատակների իրականացման գործում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը նշանակալի արդյունքների է հասել 2020 թվականի դրությամբ՝ 16 տոկոսով կրճատելով արտադրության ընթացքում ջրի սպառումը և 37.5 տոկոսով նվազեցնելով ածխածնային արտանետումներն ամբողջ

արժեշրջայում՝ տեղի արտադրողներից մինչև շուկայում գտնվող սառնարանները:

Կորպորատիվ պատասխանատվության ավելի լայն հասկացությունների շրջանակներում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ձևավորել է հավակնոտ երկարաժամկետ նպատակներ,

դրանք են՝ ձևավորել վստահություն մեր համայնքներում, հաճախորդներին առաջարկել բոլոր առիթներին համապատասխան ապրանքներ, մատուցել ծառայություններ և ապրանքներ, որոնք կհամապատասխանեն հաճախորդների սպասելիքներին և ամրապնդել արդյունավետ ծախսումների մտածելակերպը:

ՄԵՐ ԱՐԺԵՆՆԵՐԸ

Ընկերության ռազմավարության իրականացման ընթացքում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ՓԲԸ-ն ուղղորդվում է հետևյալ կորպորատիվ արժեքներով՝



Այս արժեքները ոչ միայն ինտեգրված են ընկերության քաղաքականության մեջ, այլ նաև արտահայտված են ընկերության բիզնես գործընթացների, արտադրության և մատակարարման շղթայի մեջ: Այս կերպ՝ «Կոկա-Կոլա

ՀԲԲ»-ն նպատակ ունի բոլոր հաճախորդների համար դառնալ ըմպելիքների առաջատար գործընկեր՝ ապահովելով ըմպելիք օրվա բոլոր պահերի սպառման համար:



Մեր քաղաքականությունը և կոռուպցիայի դեմ պայքարը



«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը նպատակ ունի ապահովել ամենաբարձր ստանդարտ կատարողականը՝ միաժամանակ հարգելով հասարակության և շրջակա միջավայրի շահերը: Այդ պատճառով ընկերության բիզնես գործողությունների բոլոր ասպեկտները համակարգվում են քաղաքականություններով, որոնք ներառում են ընկերության կորպորատիվ արժեքները: Ընկերության քաղաքականությունների մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք գնալ հետևյալ հղումով՝ <https://am.coca-colahellenic.com/hy/about-us/policies/>:

Քաղաքականությունների դրույթները պարտադիր են և տարածվում են բոլոր աշխատակիցների վրա՝ անկախ զբաղեցրած պաշտոնից և աշխատանքային փորձից: Բոլոր նոր աշխատակիցներն անցնում են ընկերության քաղաքականությունների և պրակտիկաների մասին պարտադիր ներածական դասընթաց. բոլոր աշխատակիցներն անցնում են պարտադիր պարբերական վերապատրաստումներ:

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ» ընկերությունների խումբը թարմացրեց իր քաղաքականությունը կաշառակերության դեմ: Հիմնական նպատակն էր բարձրացնել դրա հասանելիությունը՝ այն դարձնելով ավելի հասկանալի և հեշտ կիրառելի բոլոր աշխատակիցների համար: Նպատակն իրականացվեց՝ ներկայացնելով իրական կյանքին բնորոշ իրավիճակներ, որոնք ցուցում են կաշառակերության դեպքեր նկատելիս անհրաժեշտ գործողությունների հաջորդականությունը, և ցույց են տալիս այն հետևանքները, որոնց կրախվեն կաշառակերության մեջ ներգրավված մարդիկ:

ԿՈՒՎ-ԿՈՒՎ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն իր բիզնեսի ամբողջականության ապահովման նպատակով իր գործունեության ընթացքում ցուցաբերում է գրոյական հանդուրժողականություն կոռուպցիոն դեպքերի և կաշառակերության դեմ քաղաքականության այլ խախտումների նկատմամբ: Ընկերությունը հետևում է աշխարհում ընդունված «Կոկա-Կոլա ՀԲԲ» ընկերության ամբողջականության սկզբունքներին, ինչպիսիք են՝

- «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության բոլոր աշխատակիցները, ղեկավարները, գործող հանձնաժողովի անդամները և տնօրենները պետք է խուսափեն կաշառքի կամ կոռուպցիայի որևէ ձևով մասնակցությունից՝ անկախ քաղաքացիությունից, բնակության կամ գտնվելու վայրից.
- կաշառակերության դեմ կիրառվող օրենքները նաև արգելում են ընկերության անունից հանդես եկող ցանկացած երրորդ կողմի, ներառյալ մատակարարների, դիստրիբյուտորների, գործակալների, խորհրդատուների և կապալառուների կողմից կատարված կոռուպցիոն վճարումները: Սա տարածվում է նաև ենթակապալառուների կամ խորհրդատուների վրա, որոնք վարձել են երրորդ կողմերը ընկերության անունից աշխատանքներ կատարելու համար.
- ընկերության մատակարարների, դիստրիբյուտորների, գործակալների, խորհրդատուների և կապալառուների համար նույնպես սույն քաղաքականության մի շարք սկզբունքներ պարտադիր են՝ ընկերության մատակարարների ուղեցույց սկզբունքների համաձայն:

Քաղաքականության դրույթներին համապատասխանությունն առավելագույնի հասցնելու նպատակով բոլոր նոր աշխատակիցները պարտավոր են անցնել Կաշառակերության դեմ քաղաքականության վերաբերյալ դասընթացներ՝ կաշառակերության և կոռուպցիայի դեմ պայքարի համապատասխան կանոնակարգերի ամբողջական ընկալումն ապահովելու համար: Ընկերությունը նոր աշխատակիցների աշխատանքի ընդունվելուն հաջորդող երկու ամիսների ընթացքում նրանց համար անցկացնում է դասընթացներ, ինչպես նաև պարտադիր թարմացման դասեր յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ: Դասընթացներն իրականացվում են առցանց և դասական տարբերակներով, ինչպես նաև տարբեր նախաձեռնությունների միջոցով (օր.՝ Եթիկայի և Համապատասխանության շաբաթ), որոնք նպաստում են համապատասխանության ամրապնդմանը:

Եթե աշխատողը նկատում է այնպիսի գործունեություն, որը կարող է խախտել Կաշառակերության դեմ քաղաքականության դրույթները, կամ եթե աշխատողին դիմում են կաշառակերության կամ կոռուպցիայի մեջ ներգրավելու նպատակով, ապա աշխատողը պարտավոր է զեկուցել այդ դեպքերի մասին Եթիկայի և Համապատասխանության պատասխանատուին կամ օգտագործել հատուկ «Նոսիրի» թեժ գիծը, որը թույլ է տալիս անանուն կերպով տեղեկատվություն հաղորդել: Եթե աշխատողը կարողանա վերանայվում և ուսումնասիրվում են և կարող են հանգեցնել կարգապահական միջոցառումների: Կաշառակերության դեմ քաղաքականության խախտման մասին չտեղեկացնելն ինքնին Կաշառակերության դեմ քաղաքականության և Գործարար վարքագծի կանոնների խախտում է:

Ավելին ընկերությունը շարունակաբար իրականացնում է կոռուպցիոն ռիսկերի գնահատում: Նման գնահատումներից մեկի համաձայն՝ 2019 թվականին կոռուպցիոն ռիսկեր չեն հայտնաբերվել:


ԿԱՆԱՎՐԳԵԼԻՉ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոր ապրանքատեսակ կամ լրացուցիչ գործընթաց մշակելիս «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն ուղղորդվում է ռիսկերի գնահատման խիստ գործընթացով՝ ուղղված առկա բոլոր արտադրական գծերին և հաստատություններին: Գործընթացը սովորաբար սկսվում է գործարկման նախատեսված ամսաթվից 9 ամիս առաջ: Այդ ժամանակահատվածում բազմազործառնության թիմը կատարում է երեք հիմնական քայլ (1) իրականացնում է ապրանքի բանաձևի զննում տեղական օրենսդրության պահանջների, ներառյալ սննդի անվտանգության և որակի, առողջության և անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության կանոնակարգերի համատեքստում, (2) կյանքի է կոչում բանաձևը՝ արտադրելով խտանյութը, և (3) այն մատակարարում է արտադրամասին և պահեստավորում ընկերության հաստատություններում:

ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԲԻՉՆԵՍ ՄԻՋՎԱՅՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ

Շարունակական կատարելագործումը և զարգացումը «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կորպորատիվ մշակույթի հիմնական տարրերն են: Այդ պատճառով ընկերությունը տարբեր ասոցիացիաների անդամ է, որոնք միջոցով զգալի ներդրում է կատարում, ի թիվս այլոց, բիզնես միջավայրի և համայնքների զարգացման, կայունության գործելակերպի խթանման և կորպորատիվ կառավարման բարձր չափանիշների զարգացումը Հայաստանում ապահովելու գործում:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն ավելի քան 10 տարի է, ինչ համագործակցում է «Օրբան» հասարակական կազմակերպության հետ: Բացի այդ, ընկերությունն անդամակցում է Հայաստանում Ամերիկայի առևտրի պալատին, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությանը, Եվրոպական բիզնես ասոցիացիային և Հայ-բրիտանական գործարարության պալատին՝ կատարելով շահերի պաշտպանի դեր:





Մեր արտադրանքները

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ձգտում է բավարարել ներքին արագ աճող շուկայի պահանջները՝ արտադրելով, ներմուծելով և մատակարարելով երկու տեսակի արտադրանքներ՝ գազավորված զովացուցիչ ըմպելիքներ և ոչ գազավորված ըմպելիքներ:

ԱՐՏԱԴՐՎՈՂ ԸՆԴԵԼԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆԻՆ ՆԵՐԱՌՈՒՄ Է՝

ԳԱԶԱՎՈՐՎԱԾ ԶՈՎԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԻՔՆԵՐ (Պլաստիկ (ՊԷՏ) և վերադարձվող ապակե շշերով)

- Կոկա-Կոլա
- Ֆանտա
- Սփրայտ



ԿՈՎԱ-ԿՈՒԱ ՀԵԼԵՆԻԿ ԲՈՌՔԻՆ ԲԱՄՓԻՆ ԱՐՄԵՆԻԱ

ՈՉ ԳԱԶԱՎՈՐՎԱԾ ԸՄՊԵԼԻՔՆԵՐ

(Պլաստիկ (ՊԷՏ) շշերով)

- Բոնակուա խմելու ջուր
- Բոնակուա գազավորված ջուր



ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԸՄՊԵԼԻՔՆԵՐԸ ՀԵՏԱՅԱԼՆ ԵՆ՝

ԳԱԶԱՎՈՐՎԱԾ ԶՈՎԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԻՔՆԵՐ

- Կոկա-Կոլա թիթեյա տարայով
- Շվեպս



ՈՉ ԳԱԶԱՎՈՐՎԱԾ ԸՄՊԵԼԻՔՆԵՐ

- Դոբրի հյուլթեր
- Ֆյուլգթի
- Բըրն Էներգետիկ ըմպելիքներ
- Փաուերբեյդ



2019 թվականին ընկերության արտադրանքների տեսականին ենթարկվել է որոշ փոփոխությունների: Ներկայացվել են նոր ապրանքներ, ինչպիսիք են 0.33 լիտր Ֆյուլգթին՝ թիթեյա տարայով, անտառային հատապտուղների համով Ֆյուլգթին, Ֆանտա խազողը և Դոբրի հյուլթերը: Բացի այդ, վերածնված ըմպելիքներ են երկու Ֆյուլգթի և Կոկա-Կոլա թիթեյա տարայով արտադրանքների փաթեթավորումը:

ՇԱՔԱՐԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը խրախուսում է ճիշտ և առողջ սննդակարգի պահպանումը՝ նպատակ ունենալով ընդլայնել ցածր էներգետիկ արժեքով արտադրանքների տեսականին և նվազեցնել ըմպելիքների մեջ շաքարի օգտագործումը: «Չերո» տեսակի արտադրանքներն առաջնահերթություն են դարձել արտադրանքների տեսականու զարգացման հարցում: 2019 թվականին ընկերության նպատակն էր «առանց շաքարի» ապրանքատեսակի սպառման խթանումը շուկայի ակտիվացման և ATL գովազդների միջոցով: Վերջինս «Կալորիականության նվազեցման ծրագրի» կողմից ներկայացված ներկայիս բիզնես նպատակների հիմնական մասն է կազմում: Ծրագիրը հիմնված է այն գաղափարի վրա, որ բանաձևի յուրաքանչյուր փոփոխություն թույլ է տալիս նվազեցնել էներգետիկ արժեքը: Այսպիսով այս ոլորտում հիմնական նորարարությունները թույլ են տվել շուկայում ներկայացնել շաքար չպարունակող ապրանքատեսակների մի շարք՝ Դոբրի 100% հյուլթերը: Այս ռազմավարությունը նաև նպատակ ունի փոխել գազավորված զովացուցիչ ըմպելիքների տեսականին՝ առաջիկայում ներկայացնելով Կոկա-Կոլա համայն ըմպելիքը:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԵՎՈՒՅՑ 2019






Մեր մատակարարման շղթան

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության մատակարարման ամբողջական ցանցն իր արտադրանքը հասանելի և ճանաչված է դարձնում ամբողջ երկրում: Մատակարարման ցանցի գործառույթը ներառում է հետևյալ բիզնես գործընթացները՝ արտադրության և ներմուծման պլանավորում, գնումներ, արտադրություն և նախագծում, արտադրանքի մատակարարում գործարաններից սպառողներին, մատակարարման ցանցի այլ ծառայություններ ու կայունություն: Ընկերությունը հանձն է առել ապահովել մատակարարման շղթայի հիմնական տարրերի արդյունավետ և անխափան փոխգործունեությունը՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը:

Չնայած ամբողջ շղթայի կայունության պահպանման պատասխանատվությանը՝ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն աշխատում է նպաստել երկրի տնտեսության զարգացմանը: Այդ պատճառով ընկերությունը խրախուսում է տեղական մատակարարների հետ համագործակցությունը: Այսպիսով, 2019 թվականին ընկերությունն աշխատել է 347 տեղական մատակարարների հետ, ինչը կազմում է հաշվետու ժամանակահատվածում մատակարարների ընդհանուր թվի 83.1%-ը և գնումների բյուջեի 33.5%-ը:

Տեղական մատակարարներից գնումների հիմնական խմբավորումները հետևյալն են՝



Օտարերկրյա մատակարարներից գնումների հիմնական կատեգորիաները՝



ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Նյութերի գնման գործընթացը և մատակարարների հետ համագործակցությունը «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունում հիմնականում տեղի է ունենում մատակարարման քաղաքականության դրույթների հիման վրա: Քաղաքականությունը սահմանում է գնումների ողջ գործընթացի թափանցիկ կանոններ և օգնում է բացահայտել լավագույն մատակարարներին: Սա, ըստ էության, թույլ է տալիս մատակարարների հետ ստեղծել փոխշահավետ համագործակցություն (երկկողմանի հաղթող համագործակցություն)՝ ստեղծելով համատեղ արժեք: Այսպիսով, «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության գնումների իրականացման մոտեցման հիմնական նպատակներն են հումքի պահանջարկի և առաջարկի ապահովումը, համագործակցության համար ոլորտային լավագույն առաջարկների և մատակարարների բացահայտումը, և գնումների այնպիսի ընթացքի ապահովումը, որը համապատասխանում է առկա բյուջետային և ժամանակային սահմանափակումներին: Ընկերության գնումների բաժինը պատասխանատու է այդ նպատակների իրականացման վերահսկողության համար:

Ավելին, քանի որ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ձգտում է նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը գնումների և մատակարարման բոլոր գործընթացներում, շրջակա միջավայրի վերաբերյալ իրազեկման սկզբունքներն արտացոլված են նաև Գնումների բաժնի պահանջներում: Հավանական մատակարարների և գնումների առաջարկների գնահատումը հիմնված է 5R չափանիշների վրա՝ կրճատում, վերամշակում, վերօգտագործում, փտում, մերժում: Այս մոտեցումը ենթադրում է մատակարարների բնապահպանական կատարողականի աճող կարևորությունը՝ որպես գնումների և մատակարարման որոշումների կայացման որոշիչ գործոններից մեկը: Եթե ընկերությունը մտադիր է ձեռք բերել, օրինակ՝ տրանսպորտային ծառայություններ, մատակարարն ընտրվում է՝ հիմնվելով ոչ միայն դրանց արժեքի վրա, այլ նաև տրանսպորտային միջոցների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունով պայմանավորված դասակարգման վրա՝ նպատակ ունենալով կրճատել ածխածնային արտանետումները բեռնափոխադրման ընթացքում: Նմանապես, ընկերությունը միշտ առաջնահերթություն է տալիս ստվարաթղթի և թղթի այն մատակարարներին, որոնք զբաղվում են ստվարաթղթի և թղթի վերամշակմամբ:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻՆ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության բարձրորակ արտադրանքի հիմնարար փիլիսոփայությունը ներքին ընթացակարգերից դուրս է և տարածվում է նաև մատակարարների վրա: Որպես «Կոկա-Կոլա» գլոբալ համակարգի մի մաս՝ ընկերությունն ապրանքների բաղադրիչների և հիմնական փաթեթավորման նյութերի մատակարարների նկատմամբ կիրառում է մատակարարի առաջնորդող սկզբունքների չափանիշները: Այս սկզբունքների համաձայն՝ մատակարարները պետք է համակարգեն իրենց գործունեությունն ըստ համապատասխան ազգային օրենսդրության դրույթների և ընկերությանը տրամադրեն կայուն որակ ունեցող նյութեր: Եվ, իրոք, «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն իր 1-ին կարգի մատակարարներից պահանջում է ձեռք բերել հետևյալ չափանիշների հավաստագրում՝ որակի վերաբերյալ ISO 9001, բնապահպանական կառավարման վերաբերյալ ISO 14001, և առողջապահության և անվտանգության կառավարման վերաբերյալ ՄԱԿՀ 18001: Սննդի բաղադրամասերի


և փաթեթավորման մատակարարները պետք է նաև ստանան ընտրված Սննդամթերքի անվտանգության գլոբալ նախաձեռնության կողմից (GFSI) տրված հավաստագիր, ինչպիսին է FSSC 22000-ը:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը, տարեկան գնահատումներ կատարելով, ապահովում է մատակարարների համապատասխանեցումն իր չափանիշներին: Ընկերությունը կիրառում է եռաստիճան գնահատման համակարգ, նախնական ընտրությունը, ըստ սոցիալական սկզբունքների համապատասխանության, իրականացվում է Exiger ընդհանուր համակարգի միջոցով, երկրորդ մակարդակի գնահատումն իրականացվում է տարեկան կտրվածքով՝ ներգրավելով բոլոր ներքին շահակիցներին, և նպատակ ունի գնահատել մատակարարի կատարողականը, և վերջնական գնահատումը ներառում է EcoVadis համակարգը, որը գնահատում է շրջակա միջավայրի վրա մեր ունեցած ազդեցությունը:

2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» խումբն իր Հայաստանի գնումների թիմի հետ միասին, համագործակցելով «Կոկա-Կոլա» ընկերության գնումների խմբի հետ, անցկացրին միջազգային մասշտաբի մի շարք մրցույթներ՝ նպատակ ունենալով ընտրել ոլորտային լավագույն գործընկերներին և հաստատել երկարաժամկետ կայուն փոխհարաբերություններ՝ ի պատասխան ժամանակակից աշխարհի անկայունության: Մատակարարման ողջ շղթայում բախվելով մի շարք մարտահրավերների՝ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն ամրապնդում է համագործակցությունն իր մատակարարների հետ և կառուցում անվտանգ ենթակառուցվածք: Ընկերության ընթացիկ առաջնահերթությունները գնումների պրակտիկայում հիմնվում են արագաշարժ գործառնությունների և ճկուն բիզնես գործընթացների վրա: Որպես այդպիսին՝ 2020 թվականի գնումներին առնչվող նպատակները ներառում են՝

- համախառն շահույթի բարելավում՝ օգտագործելով շուկայական հնարավորություններ համաշխարհային տնտեսության վերակազմավորմամբ,
- շուկա դուրս գալու ժամկետների կրճատում մատակարարման ցանցի օպտիմալացման և «խնայողական գնումներ» պրակտիկայի ամրապնդման միջոցով,
- մարդկանց կրթում գնումների թիմի տաղանդների զարգացման միջոցով,
- հաճախորդների սպասարկման և մատակարարների կառավարման բարելավում ժամանակակից թվային հարթակների և գործիքների կիրառման միջոցով:



ՆԿԱՅԵՆՆԵՐԸ ԴՈՒՄԻՆԻՍՏԻԿ ԳՐԱՅԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՆԱԿԱՐ
 ԵՑՈՒ ՊՈՒՆԵՐՆԵՐԸ ԴՈՒՄԻՆԻՍՏԻԿ ԳՐԱՅԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՆԱԿԱՐ
 ԴԱՅԵՍԵՆՆԵՐԸ ԴՈՒՄԻՆԻՍՏԻԿ ԳՐԱՅԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՆԱԿԱՐ
 ԴԱՅԵՍԵՆՆԵՐԸ ԴՈՒՄԻՆԻՍՏԻԿ ԳՐԱՅԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՆԱԿԱՐ



ՆԵՐԴՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԶ



«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը հանձնառել է ամենաբարձր որակի ապրանքներ արտադրել և ձգտում է ամուր համագործակցություն հաստատել իր արտադրանքը շուկա մատակարարող հաճախորդների հետ: Ընկերությունը զարգացնում է լայն համագործակցություն տեղական մատակարարների հետ՝ դրանով իսկ աջակցելով հարակից ոլորտներին: Արտադրության մեջ ներդրումները և տեղական մատակարարների, դիստրիբյուտորների և հաճախորդների հետ համագործակցությունը վաճառքի բոլոր ուղղություններով ներարկումներ են առաջացնում Հայաստանի տնտեսությունում՝ ստեղծելով դրական տնտեսական ազդեցություն, որը տարածվում է տնտեսության տարբեր ճյուղերում:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը գնահատում է 2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կողմից կատարված ընդհանուր ներդրումները Հայաստանի տնտեսության չորս բնագավառներում՝

- ներդրումներ համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ),
- ներդրումներ զբաղվածության ոլորտում,
- ներդրումներ աշխատանքային եկամուտներում,
- հարկային վճարումներ:

Ընդհանուր ներդրումները չորս ոլորտներից յուրաքանչյուրում ներառում են «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության գործունեության անմիջական ազդեցությունը, ինչպես նաև ներդրումների անուղղակի և ինդուկցված տեսակներ:

- **Անմիջական ներդրումները** գոյանում են ուղղակիորեն «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կողմից՝ ընկերության կողմից ստեղծված ավելացված արժեքով, աշխատակիցների թվով,


աշխատակիցներին կատարված վճարումներով և պետությանը վճարված հարկերի ձևով:

- **Անուղղակի ներդրումները** գոյանում են «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ներքին գնումների միջոցով: Ընկերությունը վճարում է տեղական մատակարարներին և կապալառուներին տրամադրված ապրանքների և ծառայությունների դիմաց և այդպիսով աջակցում է նրանց ստեղծել ավելացված արժեք, վարձատրել մարդկանց և վճարել աշխատավարձեր և հարկեր պետական բյուջե:
- «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը, բացի մատակարարներից և կապալառուներից, համագործակցում է նաև ընկերության արտադրանքը վաճառող դիստրիբյուտորների և մանրածախ ընկերությունների հետ: Այսպիսով, «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության անուղղակի ազդեցությունը տարածվում է վաճառքի տարբեր ուղիների միջոցով: Անուղղակի ներդրումները բաժանվում են երկու խմբի:

- **I շրջանի անուղղակի ներդրումներն** առաջանում են տեղական մատակարարներից և կապալառուներից ապրանքների և ծառայությունների գնման արդյունքում:
- **II շրջանի անուղղակի ներդրումներն** առաջանում են «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության արտադրանքը վաճառող դիստրիբյուտորների և մանրածախ առևտրային ընկերությունների հետ համագործակցության միջոցով:
- **Ինդուկցված ներդրումներն** առաջանում են «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության աշխատակիցների, մատակարարների և կապալառուների աշխատակիցների, դիստրիբյուտորների և մանրածախ առևտրի աշխատակիցների կողմից սպառողական ապրանքների սպառման արդյունքում: Սպառողական ծախսերը ներքին շուկայում նպաստում են եկամուտների ձևավորմանը տնտեսության այն ոլորտներում, որոնք արտադրում են սպառողական ապրանքներ և ծառայություններ են մատուցում բնակչությանը:
- Անուղղակի ներդրումների նման ինդուկցված ներդրումները նույնպես բաժանվում են երկու խմբի:
 - **I շրջանի ինդուկցված ներդրումներն** առաջանում են «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության աշխատակիցների և ընկերության տեղական մատակարարների սպառողական ծախսերի միջոցով:
 - **II շրջանի ինդուկցված ներդրումներն** առաջանում են աշխատակիցների՝ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության արտադրանքը վաճառող դիստրիբյուտոր ընկերություններից և մանրածախ վաճառքի կետերից սպառողական գնումների արդյունքում:

Տնտեսության մեջ ընդհանուր ներդրումների գնահատման մեթոդաբանությունը հիմնված է միջոլորտային հաշվեկշռի մոդելի վրա (մուտքային-ելքային մոդել)¹:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիայի» ՀՆԱ-ում ընդհանուր ներդրումների կառուցվածքը 2019 թվականին, միլիոն դրամ



¹ Մոդելավորման համար օգտագործվել են Eora տվյալների շտեմարանից մուտքի-ելքի արդյունավետ (https://worldmio.com/) ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական վիճակագրական տեղեկատվության հետ միասին (https://www.armstat.am/hy/):

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՀՆԱ-ՈՒՄ

Ընկերության կողմից ստեղծված ավելացված արժեքը² (այլ կերպ ասած՝ ՀՆԱ-ում ներդրումը) ցույց է տալիս, թե ընկերությունն իր գործունեության արդյունքում որքան լրացուցիչ արժեք է ավելացրել իր վերջնական արտադրանքին, նախքան այն սպառողներին առաջարկելը: Ավելացված արժեքն ընկերության վերջնական արտադրանքի արժեքն է, որը նվազեցվում է մատակարարներից ապրանքներ և ծառայություններ գնելու միջանկյալ ծախսերի չափով: Ուստի «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության դերը Հայաստանի տնտեսությունում ամենաճշգրիտ կերպով արտացոլվում է նրա՝ ՀՆԱ-ում ներդրումներով:

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ընդհանուր ներդրումը Հայաստանի ՀՆԱ-ում կազմել է 16,8 միլիարդ դրամ, ինչը կազմել է Հայաստանի ընդհանուր ՀՆԱ-ի 0,26%-ը: 2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ստեղծել է 7,1 միլիարդ դրամ ուղղակի ավելացված արժեք, ինչը կազմել է ՀՆԱ-ում իր ընդհանուր ներդրման 43%-ը: Ընկերությունն ավելի քան երկու անգամ ավելացրել է իր ուղղակի ներդրումը տեղական մատակարարներից գնումների, և դիստրիբյուտորների և մանրածախ առևտրային ընկերությունների հետ համագործակցության շնորհիվ:

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն աշխատել է 347 տեղական մատակարարների հետ և նրանցից գնումների վրա ծախսել է իր գնումների բյուջեի 33,5%-ը: Տեղական մատակարարներից և կապալառուներից իր արտադրական և վարչական կարիքների համար ապրանքներ և ծառայություններ գնելով՝ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն աջակցում է նրանց եկամուտ ստեղծելու, աշխատակիցներին աշխատավարձեր և պետությանը հարկեր վճարելու և այդպիսով ավելացված արժեք ստեղծելու կարողությանը: Այնուհետև «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության տեղական մատակարարները և կապալառուները նույնպես իրենց կարիքների համար գնումներ են կատարում տեղական շուկայից: Այս բոլոր անուղղակի ազդեցությունները կազմում են «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության I շրջանի անուղղակի ներդրումը ՀՆԱ-ում, ինչը 2019 թվականին կազմել է 1,6 միլիարդ դրամ կամ ՀՆԱ-ում ընդհանուր ներդրման 10%-ը:

■ **Տեղական մատակարարներից գնումները 2019 թվականին՝ ըստ տնտեսական գործունեության թոփ-5 տեսակների**

347
տեղական
մատակարարներ

83.1%
մատակարարների
ընդհանուր թվում

33.5%
գնումների
բյուջեում

39.2% Արտադրություն՝ ներառյալ

29.8% Նավթամթերք, քիմիական և ոչ մետաղական հանքային արտադրանքներ

6.7% Փայտ և փայտանյութեր, խցանափայ, թուղթ և թղթե արտադրանք

2.7% Գործվածքներ և հագուստ

21.8% Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն

10.9% Բնակության և սննդի սպասարկման գործունեություն

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն իր աշխատակիցներին ապահովում է արժանապատիվ վարձատրությամբ, ինչպես նաև աջակցում է իր մատակարարներին աշխատակիցների աշխատավարձը վճարելու հարցում՝ ձեռք բերելով նրանց արտադրանքն ու ծառայությունները: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության և իր մատակարարների աշխատակիցներն այնուհետև կարող են իրենց եկամուտները ծախսել սպառողական ապրանքների և ծառայությունների վրա: Հետևաբար, Հայաստանի արդյունաբերության այն ոլորտները, որոնք արտադրում են այդպիսի ապրանքներ և ծառայություններ, ստանում են եկամուտներ, որոնք իրենց հերթին նպաստում են ՀՆԱ-ի գոյացմանը: 2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ստեղծել է 4.5 միլիարդ դրամ արժողությամբ՝ I շրջանի ինդուկցված ներդրում ՀՆԱ-ում, որը կազմել է ՀՆԱ-ում ընդհանուր ներդրման 26%-ը:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կողմից ՀՆԱ-ում ներդրման ևս մեկ կարևոր մասնաբաժին գոյանում է ապրանքների բոլոր ուղիներով վաճառքի արդյունքում: Համագործակցելով «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ըմպելիքները վաճառող

դիստրիբյուտորների և մանրածախ առևտրային ընկերությունների հետ՝ 2019 թվականին ընկերությունն ավելացրել է 2.5 միլիարդ դրամ կամ ՀՆԱ-ում ընդհանուր ներդրման 15%-ը: Հայտնական արտադրության ապրանքների և ծառայությունների սպառողական ծախսերը, որոնք կատարվել են դիստրիբյուտորների և մանրածախ ընկերությունների կողմից, գոյացրել են 1.1 միլիարդ դրամ արժողությամբ՝ II շրջանի ինդուկցված ներդրում ՀՆԱ-ում (ՀՆԱ-ի ընդհանուր ներդրման 6%):

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ընդհանուր ներդրումը ՀՆԱ-ում ավելի քան երկու անգամ ավելի է, քան նրա ուղղակի ավելացված արժեքը: Դա նշանակում է, որ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության յուրաքանչյուր 1 դրամի չափով ավելացված արժեքը նպաստել է Հայաստանի ամբողջ տնտեսության մեջ 2.5 դրամ համախառն ավելացված արժեքի ստեղծմանը:


2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն ապրանքների և ծառայությունների մեծ մասը ձեռք է բերել տեղական մատակարարներից, որոնք պատկանում են արտադրական արդյունաբերության (39.2%), ֆինանսական միջնորդության և բիզնեսի գործունեության (21.8%), կացարանների և սննդի ծառայությունների (10.9%) ոլորտներին: Չնայած ընկերության ոլորտային գնումների կառուցվածքը պայմանավորված է ըմպելիքների արտադրության, բիզնեսի կառավարման, շուկայավարման, գովազդի և այլ առանձնահատուկ կարիքներով՝ ՀՆԱ-ում անուղղակի և ինդուկցված ներդրումների բաշխումը տնտեսության ճյուղերի միջև կախված է «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության բիզնես գործընկերների գնումների կառուցվածքից և բնակչության սպառողական նախընտրություններից: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության մատակարարները, ինչպես նաև իր դիստրիբյուտորներն ու մանրածախ վաճառողներն ապրանքներ և ծառայություններ են ձեռք բերում տնտեսության տարբեր ճյուղերից: Արդյունքում, «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության I և II շրջանների անուղղակի և ինդուկցված ներդրումները ՀՆԱ-ում բաշխվում են Հայաստանի տնտեսության բազմաթիվ ճյուղերի միջև, որոնցից առավելագույն օգուտ են ստացել ֆինանսական միջնորդության և բիզնես գործունեության (28.6%), գյուղատնտեսության (16.5%), էլեկտրաէներգիայի, գազի և ջրի (7.1%) և այլ ոլորտները:

16.8 միլիարդ դրամ՝ 2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ընդհանուր ներդրումը ՀՆԱ-ում

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ստեղծած յուրաքանչյուր **1 դրամ ավելացված արժեքի շնորհիվ** Հայաստանի տնտեսությունում ստեղծվում է

2.3 դրամ համախառն ավելացված արժեք


■ **2019 թվականին ՀՆԱ-ում անուղղակի և ինդուկցված ներդրումների ոլորտային կառուցվածքը, միլիոն դրամ**



ՆԵՐԴՐՈՒՄ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

2019 թվականի վերջի դրությամբ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն ունեցել է 381 աշխատակից: Զբաղվածության մեջ իր անուղղակի և ինդուկցված ներդրումների շնորհիվ ընկերությունն աջակցել է Հայաստանի տնտեսությունում լրացուցիչ 2090 աշխատատեղերի պահպանմանը: Հետևաբար, «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ընդհանուր ներդրումը զբաղվածության ոլորտում կազմել է 2,471 աշխատատեղ, ինչը 2019 թվականին Հայաստանում ընդհանուր զբաղվածության 0.26%-ն է:

■ **«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության՝ 2019 թվականին զբաղվածության ոլորտում ընդհանուր ներդրումների կառուցվածքը, աշխատատեղերի քանակը:**



«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության աշխատակիցների թիվը (ուղղակի ներդրում) կազմել է 381 մարդ կամ զբաղվածության ոլորտում ընկերության ընդհանուր ներդրման 15%-ը: Մինչդեռ I և II շրջանների անուղղակի ազդեցությունները միասին առաջացրել են լրացուցիչ 1,507 աշխատատեղ կամ զբաղվածության ոլորտում ընդհանուր ներդրման 61%-ը: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կողմից I և II շրջանների ինդուկցված ներդրումներն ապահովել են տնտեսության կողմից աջակցվող ևս 583 աշխատատեղ, կամ զբաղվածության ոլորտում ընդհանուր ներդրման 24%-ը:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն էական ազդեցություն ունի տնտեսության այլ ճյուղերում զբաղվածության վրա, քանի որ 2019 թվականին նրա

ընդհանուր ներդրումը զբաղվածության ոլորտում վեց անգամ գերազանցել է ուղղակի ներդրումը: Դա մասամբ պայմանավորված է նրանով, որ մատակարարներն ու առևտրային գործընկերները, որոնք հետ ընկերությունը համագործակցում է, մարդկային աշխատանքի վրա հիմնված ոլորտներից են:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության գնումների շրջային միջոցով պահպանվող աշխատատեղերի քանակը կազմել է 466 աշխատատեղ (I շրջանի անուղղակի ներդրում): Ընկերության աշխատակիցների, ինչպես նաև մատակարարների աշխատակիցների սպառողական ծախսերի շնորհիվ պահպանվել է ևս 295 աշխատատեղ տնտեսության այն ճյուղերում, որոնք արտադրում են սպառողական ապրանքներ և ծառայություններ (I շրջանի ինդուկցված ներդրում):


2,471 աշխատատեղ՝ աշխատատեղերի ընդհանուր քանակը, որոնք «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» օգնել է պահպանել Հայաստանի տնտեսությունում իր՝ զբաղվածության ոլորտում 2019 թվականին ուղղակի, անուղղակի և ինդուկցված ներդրումների շնորհիվ

6 աշխատատեղ է ապահովվում Հայաստանի տնտեսությունում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիայի» **1** աշխատակցի միջոցով

Դիստրիբյուտորների և մանրածախ վաճառողների հետ համագործակցության շնորհիվ առաջացած աշխատատեղերի քանակը (II շրջանի անուղղակի ներդրում) կազմել է զբաղվածության մեջ ընդհանուր ներդրման ամենամեծ մասը, այն է՝ 42% կամ 1,041 աշխատատեղ: Այն ընկերությունների աշխատակիցների սպառողական ծախսերը, որոնք զբաղվում են «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ըմպելիքների բաշխումով և բոլոր ուղիներով վաճառքով նպաստել են Հայաստանի տնտեսությունում լրացուցիչ 287 աշխատատեղի ստեղծմանը:

Տնտեսության մեծածախ առևտրի ոլորտն ամենաշատն է շահել և ստացել է «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կողմից զբաղվածության ոլորտում կատարված անուղղակի և ինդուկցված ներդրումների 18.4%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կողմից հաճախորդների հետ վաճառքի տարբեր ուղիներով համագործակցության հետ (II շրջանի անուղղակի ներդրումներ): «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ներդրումը զբաղվածության մեջ բաշխվել է նաև այլ ոլորտների միջև, ինչպիսիք են ֆինանսական միջնորդությունը և բիզնես գործունեությունը (14.6%), գյուղատնտեսությունը (10.3%), տրանսպորտը (9.7%) և այլն:

2019 թվականին զբաղվածության ոլորտում անուղղակի և ինդուկցված ներդրումների ոլորտային կառուցվածքը և աշխատատեղերի քանակը




ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն իր աշխատակիցներին վճարել է 1.7 միլիարդ դրամ վարձատրություն: Ընկերությունը նաև համագործակցել է տեղական մատակարարների, դիստրիբյուտորների և մանրածախ առևտրային ընկերությունների

հետ՝ այդպիսով աջակցելով նրանց վճարել իրենց աշխատակիցների աշխատավարձերը: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ընդհանուր ներդրումը Հայաստանի բնակչության աշխատանքային եկամուտներում 2019 թվականին կազմել է 5.7 միլիարդ դրամ:

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիայի» աշխատանքային եկամուտներում ընդհանուր ներդրման կառուցվածքը, միլիոն դրամ




ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵՆՆԵՆԻԿ ԲՈՅՔԻՆԳ ԲԱՄՓՆ ԱՐՄԵՆԻԱ
 ԵՑՈՒ ԳՐՈՒԹԵԼՆԻՑ ԴՈՒՐՈՒՄՆԱՏՈՒՄ ԿՐՈՑՄՈՒՆԻՑ ԴԱՄԱՆԱԿ



2019 թվականի ընդհանուր ներդրման կառուցվածքում գերակշռել են «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ուղղակի ներդրումներն աշխատուժի եկամուտներում (31%): Ի հակադրություն դրան՝ զբաղվածության ոլորտում ընդհանուր ներդրման կառուցվածքում ուղղակի ներդրումների մասնաբաժինը կրկնակի փոքր է եղել: Դա կարելի է բացատրել այն փաստով, որ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն իր աշխատակիցներին առաջարկում է պատշաճ աշխատավարձեր, որոնք մոտավորապես երկու անգամ գերազանցում են Հայաստանի միջին ամսական աշխատավարձը: Աշխատանքային եկամուտներում ընդհանուր ներդրման մյուս նշանակալի մասնաբաժիններն առաջացել են II շրջանի անուղղակի ներդրումների շնորհիվ՝ ընդհանուր ներդրման 25%-ը կամ 1.4 միլիարդ դրամ, և I շրջանի ինդուկցված ներդրումների շնորհիվ՝ ընդհանուր ներդրման 23%-ը կամ 1.3 միլիարդ դրամ:

2019 թվականի միջին ամսական աշխատավարձը «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունում, Հայաստանում և մշակող արդյունաբերությունում, ՀՀ դրամ³




5.7 միլիարդ դրամ
«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության 2019 թվականի ընդհանուր ներդրումը Հայաստանի բնակչության աշխատանքային եկամուտներում:

3.2 դրամ աշխատանքային եկամուտը Հայաստանի ամբողջ տնտեսությունում, որն առաջացել է «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության աշխատակիցների վարձատրության յուրաքանչյուր 1 դրամի միջոցով:

Աշխատանքային եկամուտների անուղղակի և ինդուկցված ներդրումների ճյուղային կառուցվածքը կախված է տնտեսության տարբեր ոլորտներում վարձատրության մակարդակից: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության անուղղակի և ինդուկցված ներդրումները հիմնականում բաշխվել են ոլորտներում, ինչպիսիք են ֆինանսական միջնորդությունը և բիզնես գործունեությունը (20.3%), մեծածախ առևտուրը (12.4%), կրթությունը, առողջապահությունը և այլ ծառայություններ (9.1%):

2019 թվականի աշխատանքային եկամուտների ոլորտում անուղղակի և ինդուկցված ներդրումների ոլորտային կառուցվածքը, միլիոն դրամ




³ Հայաստանում և մշակող արդյունաբերությունում միջին ամսական անվանական աշխատավարձերի վերաբերյալ տվյալների աղբյուրը Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն է:

ՀԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄ

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության Հայաստանի տնտեսությունում գոյացրած ընդհանուր հարկային ներդրումները

կազմել են 7.8 միլիարդ դրամ: Սա կազմում է 2019 թվականին Հայաստանի պետական բյուջե հարկային վճարումներից գոյացած ընդհանուր եկամտի 0.53%-ը:

2019 թվականի «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիայի» ընդհանուր հարկային ներդրման կառուցվածքը, միլիոն դրամ



«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կողմից պետությանն ուղղակի վճարված հարկերի գումարը կազմել է 5.9 միլիարդ դրամ, ինչը 2019 թվականի Հայաստանի պետական բյուջե վճարված հարկերից և տուրքերից ստացված ընդհանուր եկամուտների

0.41%-ն է: Ներքին գնումների և դիստրիբյուտորների և մանրածախ առևտրային ընկերությունների հետ համագործակցության շնորհիվ ընկերությունը նպաստել է տնտեսության այլ ոլորտներում լրացուցիչ 1.9 միլիարդ դրամի գոյացմանը:

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կողմից **արված հարկային ընդհանուր ներդրումը կազմել է 7.8** միլիարդ դրամ:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության **յուրաքանչյուր 1 դրամ հարկային վճարման արդյունքում** Հայաստանի տնտեսությունում **1.3** դրամ հարկային վճարում է արվել:

ԿԱԴԻՏԱԿԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը շարունակաբար ներդրումներ է կատարում արտադրական կարողությունների և սարքավորումների մեջ: 2019 թվականին ընկերության կապիտալ ներդրումները կազմել են

1.3 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄ:

Հայաստանում ընկերության գործունեության ողջ ժամանակահատվածում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը հասել է

18.4 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄԻ:



ՄԵՐ ԹԻՄԸ



«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության հիմնական պարտավորություններից մեկն է ապահովել աշխատանքի պատշաճ պայմանները և պահպանել մարդու իրավունքների հիմնարար սկզբունքները: Ընկերությունը բարձր է գնահատում իր աշխատակիցներին և տրամադրում է ուսուցման և զարգացման բազմազան հնարավորություններ՝ իրենց հմտությունները բարելավելու համար: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը հավատարիմ է ներառական աշխատանքային մշակույթի զարգացման գործընթացին՝ տրամադրելով հավասար հնարավորություններ բոլոր աշխատակիցներին և թեկնածուներին:

ԱՇԽԱՏԱԿԻԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ

Ընկերության մոտեցումն աշխատակիցների կառավարմանը վերաբերող հարցերին բավարարում է բոլոր օրենսդրական պահանջներին, ինչպես նաև համապատասխան կորպորատիվ չափանիշներին: Այս ոլորտում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության հիմնական նպատակներն են տրամադրել հավասար հնարավորություններ բոլոր աշխատակիցներին և թեկնածուներին, բացառել տարիքային և գենդերային խտրականությունը, ինչպես նաև ստեղծել առողջ և անվտանգ աշխատանքային միջավայր: Ընկերությունն անցկացնում է թափանցիկ և բաց հարողովակության գործընթացներ՝ աշխատակիցների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու համար:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության աշխատակիցների կառավարման բոլոր գործընթացները հիմնված են կորպորատիվ քաղաքականության վրա, որը հարմարեցված է «Կոկա-Կոլա ՀԲԲ» առաջատար չափանիշներին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը: Այս քաղաքականությունների զգալի մասը թարմացվել է 2019 թվականին: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության բոլոր հաստիքների համալրման և ընտրության գործընթացին վերաբերող սկզբունքներն

ու պահանջները սահմանված են Աշխատակիցների պայմանագրերի կառավարման և համալրման քաղաքականության մեջ: **Աշխատակիցների անձնական գրառումների կառավարման քաղաքականությունը սահմանում է ընկերության պարտականություններն աշխատակիցների անձնական տվյալները ղեկավարելու, անձնական տվյալներ հավաքագրելու, մշակելու, ստեղծելու, պահպանելու և կառավարելու գործընթացը: Վարձու աշխատակիցների պայմանների փոփոխության քաղաքականությունը** սահմանում է վարձու աշխատակիցների պայմանների փոփոխության ընթացակարգը, ներառյալ բոլոր համապատասխան ծանուցումների և պահանջագրերի պատրաստումը: **Զբաղվածության դադարեցման քաղաքականությունը** սահմանում է աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ում զբաղվածության դադարեցման դեպքերում: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության և նրա աշխատակիցների՝ աշխատանքի բացակայելու, տարեկան և նպատակային արձակուրդների տրամադրման հետ կապված իրավունքներն ու պարտականությունները սահմանում է **Արձակուրդների տրամադրման քաղաքականությունը:**

Տեղափոխման քաղաքականությունը սահմանում է արտաքին տեղափոխությունների ընթացակարգը բոլոր աշխատակիցների համար, ինչպես նաև աշխատանքի թույլտվություն ստանալու գործընթացը: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն իր բոլոր աշխատակիցներին տրամադրում է հասանելիություն վերը նշված քաղաքականություններին: Աշխատակիցների կառավարման համակարգի որակը գնահատվում է ներքին հսկողության համակարգի միջոցով, որը կառավարվում է խմբային մակարդակում:

Ընկերության՝ բողոքների դիտարկման քաղաքականությունն ուղղված է աջակցել աշխատակիցներին պաշտոնական և ոչ պաշտոնական բողոքներ ներկայացնելու: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»

ընկերությունը կարևորում է աշխատակիցների հետադարձ կապը: Յուրաքանչյուրը կարող է ազատ արտահայտել իր մտահոգություններն իրենց ղեկավարներին և կադրերի բաժնի թիմին: Աշխատակիցները կարող են նաև ներկայացնել իրենց առաջարկներն ու բողոքները «խոսուի» էթիկայի կետում: Կադրերի բաժնի թիմն օժանդակում է բաց երկխոսությունը զբաղվածությանը վերաբերող բոլոր հարցերի շուրջ, կանոնավոր կերպով կազմակերպում է հանդիպումներ և բանակցություններ ղեկավարների հետ, ներառյալ իրազեկման դասընթացները: 2019 թվականին տեղի ունեցան տեղեկատվական դասընթացներ տաղանդների ծեռքերման գործընթացների, էթիկայի հարցերի, ինչպես նաև արտադրողականության կառավարման գործընթացների վերաբերյալ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻԳՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ


«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության աշխատակիցների թիվը 2019 թվականի վերջի դրությամբ կազմել է 381, որոնցից 353-ն աշխատում է Երևանի գործարանում և գրասենյակում, ևս 28-ը՝ մարզերում՝ որպես վաճառքի բաժնի մասնագետ: Գործարանի աշխատակիցները կազմում են աշխատակիցների ընդհանուր թվի 41.7%-ը, գրասենյակի աշխատակիցները՝ 41.5%, մնացածը՝ միջին օղակների կառավարման ներկայացուցիչները՝ 14.7%, բարձրագույն ղեկավարությունը կազմում է 2.1%: Աշխատակիցների մեծամասնության տարիքը չի գերազանցում 30-ը (49.6%):

Տղամարդիկ կազմում են բոլոր աշխատակիցների 78.0% -ը, որի պատճառը վաճառքի բաժնի, գործարան և մի շարք այլ պաշտոնների համար

դիմող տղամարդ-թեկնածուների մեծ թիվն է: Գործարանի աշխատակիցների շրջանում տղամարդ-մասնագետների մասնաբաժինն ամենաբարձրն է (94.3%), ինչը պայմանավորված է գործարանում իրականացվող աշխատանքների և գործընթացների առանձնահատկություններով: 2019 թվականին ընկերության բարձրագույն ղեկավարության կեսը կազմում էին կանայք: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ձգտում է ավելի մեծ բազմազանություն ունենալ իր աշխատակիցների շրջանում և շարունակում է հետևել «Կոկա-Կոլա ՀԲԲ» ընդհանուր նպատակին, այն է՝ մինչև 2025 թվականը ղեկավար պաշտոնների 50%-ը կզբաղեցնեն կանայք:

2019 թվականին ավագ ղեկավարների 64%-ը եղել են ՀՀ քաղաքացիներ:

■ 2019 թվականին աշխատակիցների թիվը՝ ըստ սեռի, տարիքի և աշխատակցի կատեգորիայի: (31.12.2019 թվականի դրությամբ)





«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության աշխատակիցների մեծ մասը (99.5%) ամբողջ դրույքով աշխատողներ են: Աշխատակիցների մեծ մասն աշխատում է մշտական աշխատանքային պայմանագրով (87.1%): Ժամանակավոր աշխատանքային պայմանագրերը հիմնականում տրամադրվում են սեզոնային աշխատակիցներին վաճառքի, արտադրության և պահեստավորման ոլորտներում:

Աշխատակիցների թիվը՝ ըստ աշխատանքային պայմանագրի	Երևան		Մարզ	
	Տղամարդիկ	Կանայք	Տղամարդիկ	Կանայք
Մշտական աշխատանքային պայմանագրով աշխատակիցների ընդհանուր թիվը	235	69	28	0
Ժամանակավոր աշխատանքային պայմանագրով աշխատակիցների ընդհանուր թիվը	34	15	0	0

Աշխատակիցների թիվը՝ ըստ աշխատանքի տեսակի	Երևան		Մարզ	
	Տղամարդիկ	Կանայք	Տղամարդիկ	Կանայք
Ամբողջ դրույքով աշխատակիցների ընդհանուր թիվը	269	82	28	0
Ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատակիցների ընդհանուր թիվը	0	2	0	0

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն օգտագործում է կապալառուների ծառայություններ միայն արտադրանքի ինքնաառաքման համար (մասնավորապես փոխադրման ծառայության համար), որպեսզի պատրաստի արտադրանքն առաջի իր դիստրիբյուտորներին դեպի հետևյալ մարզեր՝ Գյումրի, Վանաձոր և Ստեփանակերտ: Նման մոտեցումն օգնում է ճիշտ կառավարել լոգիստիկ գործընթացը հատկապես խիստ ծանրաբեռնված սեզոնին:

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն ընդունեց աշխատանքի 112 նոր աշխատակից, մինչդեռ աշխատանքից ազատվեց 76 աշխատակից: Տարվա ընթացքում աշխատակիցների՝ աշխատանքից հեռանալու հիմնական պատճառները եղել են՝ կարիերայի նախընտրությունների փոփոխությունը, աշխատանքի կամ ուսման նպատակով արտագաղթը և աշխատակիցների ցածր արտադրողականությունը:

2019 թվականին աշխատակիցների ընդհանուր հոսունությունը կազմել է **22.34%**: Տղամարդ-աշխատակիցների հոսունության ցուցանիշը⁴ փոքր-ինչ բարձր է (**23.35%**)՝ ի տարբերություն կին աշխատակիցների նույն ցուցանիշի (**18.14%**):

■ Աշխատակիցների թվաքանակի փոփոխությունը 2019 թվականին

Ըստ սեռի	Տղամարդիկ	Աշխատակից վարձել են	
		Աշխատակից վարձել են	Ազատվել են
Ըստ տարիքի	Տղամարդիկ	85	64
	Կանայք	27	12
	Մինչև 30 տարեկան	92	52
Ըստ կատեգորիայի	30-50 տարեկան	18	22
	50 տարեկանից բարձր	2	2
	Բարձր օղակի ղեկավարություն	1	0
Ըստ աշխատավայրի	Միջին օղակի ղեկավարություն	7	11
	Գրասենյակի աշխատակիցներ	55	38
	Գործարանի աշխատակիցներ	49	27
	Գործարան (Երևան)	19	12
Ըստ աշխատավայրի	Գրասենյակ (Երևան)	83	54
	Վյ բաժիններ (աշխարհագրական շրջաններ)	10	10

⁴ Կարգերի տարեկան հոսունությունը հավաքակազմում է հետևյալ կերպ՝ (Աշխատակիցների թիվը հավելումով ողջ ժամանակահատվածում / Հավելում ողջ ժամանակահատվածում մշտական աշխատակիցների միջին փաստացի թիվը) x 100

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ և ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը պարտավորվում է ապահովել բոլոր աշխատակիցների նկատմամբ արժանապատիվ և հարգալից վերաբերմունք: Ընկերությունը երաշխավորում է մարդու իրավունքների պաշտպանություն և հավասար հնարավորություններ բոլոր աշխատակիցների համար՝ հետևելով «Կոկա-Կոլա ՀԲԲ» ներառման և բազմազանության քաղաքականությանը: Այս քաղաքականությանը համապատասխանությունը վերահսկվում է ներքին հսկողության համակարգի միջոցով:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ձգտում է գերծ պահել աշխատավայրը ցանկացած տեսակի խտրականություններից՝ սեռի, ամուսնական կարգավիճակի, ընտանեկան կարգավիճակի, ներառյալ հղիությանը, մայրությանը, հայրությանը, ցեղի, էթնիկական պատկանելիության և ազգության, կրոնական, քաղաքական կամ այլ համոզմունքների և ցանկացած այլ բնութագրերի հետ կապված խտրականություններից, որոնք պաշտպանված են տեղական օրենսդրությամբ:

Բացի այդ, «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ստեղծում է հասանելի աշխատանքային պայմաններ հաշմանդամություն ունեցող անձանց համար: 2019 թվականին ընկերության աշխատակիցներից վեցն առանձնահատուկ կարիքներ ունեցող անձիք էին: Ընկերությունը պատասխանատու է իր բոլոր աշխատակիցներին՝ հավասար հնարավորություններ ստեղծելու համար, ինչպես նաև ապահով, առողջությանը վնաս չպատճառող և անվտանգ աշխատավայր ստեղծելու համար: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը համապատասխան կանխարգելիչ գործողությունների միջոցով բացահայտում և կանխարգելում է բիզնես գործունեության հետ կապված մարդու իրավունքների ցանկացած խախտում:

■ 2019 թվականին կանանց և տղամարդկանց հիմնական աշխատավարձի և փոխհատուցումների հարաբերակցությունը՝ ըստ աշխատակիցների կատեգորիաների

Աշխատակցի կատեգորիան	Կանանց և տղամարդկանց հիմնական աշխատավարձի և փոխհատուցումների հարաբերակցությունը
Ընդհանուր	66.5%
Բարձր օղակի ղեկավարություն	62.6%
Միջին օղակի ղեկավարություն	84.5%
Գրասենյակի աշխատակիցներ (ներառյալ վաճառքի բաժինը)	54.3%
Գործարանի աշխատակիցներ	83.4%



ՈՒՍՈՒՑՈՒՄ և ԶԱՐԳԱՑՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը մտադիր է ապահովել իր աշխատակիցների շարունակական մասնագիտական աճը և նպաստել իրենց կարիերայի հաջող ընթացքին: Ընկերության վերապատրաստման և կրթական ծրագրերը նախատեսված են ապահովելու աշխատակիցներին անհրաժեշտ

2019 թվականին ընկերությունը շարունակել է աշխատավայրում ստեղծել ավելի ներառական և հարգալից մթնոլորտ և հետամուտ լինել գեներային հավասարության իր նպատակին՝

- ընկերությունը 2019 թվականին իր բոլոր աշխատակիցներին պարբերաբար հաղորդում էր էական տեղեկություններ բազմազանության և ինտեգրման հարցերի վերաբերյալ,
- կատարվել է մանրամասն վերլուծություն և մշակվել է գործողությունների ծրագիր 2020-2021 թվականներին կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ,
- 2019 թվականին գործադիր ղեկավարության թիմը բաղկացած էր հավասար թվով կանանցից և տղամարդկանցից,
- հաշվետու ժամանակահատվածում ընկերությունում խտրականության դեպքեր չեն գրանցվել:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը պարբերաբար անցկացնում է տեղեկատվական սեմինարներ բազմազանության և ինտեգրման հարցերի շուրջ: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության բոլոր նոր աշխատակիցները ծանոթանում են ընկերության մարդու իրավունքների քաղաքականության հետ: Այսպիսով, 2019 թվականին բոլոր 112 նոր աշխատակից (ինչը բոլոր աշխատակիցների 29.3% է) անցան պարտադիր 2-ժամյա դասընթաց մարդու իրավունքների տարբեր հայեցակետերի վերաբերյալ:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը հավաքագրում, սովորեցնում, խթանում և վճարում է իր աշխատակիցներին՝ ելնելով բացառապես իրենց որակավորումից, արտադրողականությունից, հմտություններից և փորձից:

Ուսուցման և զարգացման հետ կապված բոլոր գործողությունները հիմնված են աշխատակիցների անհատական զարգացման ծրագրերի վրա, իսկ կրթական ծրագրի տեսակը կախված է աշխատակցի կարգից: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության աշխատակիցներին տրամադրվող դասընթացները և կրթական ծրագրերը կարող են իրականացվել տեղական ընկերության կողմից, կազմակերպվել և իրականացվել բիզնես միավորի, կամ համբի կողմից («Կոկա-Կոլա ՀԲԲ»):

Առողջության և անվտանգության խնդիրներին վերաբերող դասընթացներն ու ծրագրերը, ինչպես նաև վարքագծի ստանդարտները, որոնք սահմանված են Գործարար վարքագծի կոդեքսում, պարտադիր են բոլոր աշխատակիցների համար:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն իրականացնում է ուսուցման և զարգացման գործունեության երկու հիմնական տեսակներ՝

- **Դասընթացներ և ծրագրեր, որոնք ուղղված են գործառնության կարողությունների զարգացմանը:** Այս տեսակի վերապատրաստման և կրթական ծրագրերը ղեկավարվում են ընկերության ներսում գտնվող ստորաբաժանման կողմից՝ ելնելով նրանից, թե աշխատակիցներին ինչ գիտելիքներով և հմտություններով է անհրաժեշտ զինել:
- **Դասընթացներ և ծրագրեր, որոնք ուղղված են առաջնորդության կարողությունների զարգացմանը:** Այս ծրագրերի նպատակն է պատրաստել աշխատակիցներին իրենց նոր դերերին ավելի բարձր առաջնորդություն պահանջող մակարդակում:

Ընկերությունն առաջարկում է հետևյալ հիմնական ծրագրերը ղեկավարների համար, որոնք օգնում են աշխատակիցներին զարգացնել ինչպես առաջնորդի, այնպես էլ հատուկ տեխնիկական հմտություններ, այն է՝ առաջնորդություն, իրավիճակի ղեկավարում, առաջնորդության ջուռչինգային ոճ առաջատար ղեկավարների համար, առաջնորդության հմտություններ և արտադրողականության արագացում փոփոխության առաջնորդների համար, Excel ծրագրի ղեկավարների համար:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը կազմակերպում է նաև կառավարման պրակտիկայի ծրագիր այն թեկնածուների համար, որոնք հատուկ ընտրվում են ապագայում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու համար: Ծրագրի տևողությունը 1-ից

2 տարի է, այն ավարտելուց հետո ակնկալվում է, որ մասնակիցները կզբաղեցնեն ղեկավար պաշտոններ: 2019 թվականին ուսնակների 43% -ն ընդունվել է աշխատանքի:

Ընկերությունը նաև մշակել է «Արագ առաջ» ծրագիրը ներկա և ապագա առաջնորդների համար, որն իր մեջ ներառում է երեք մակարդակի դասընթացներ՝ FF1 այն մասնագետների համար, որոնք պատրաստվում են ստանձնել գործառնական առաջնորդի դերը, FF2՝ գործառնական առաջնորդների համար, որոնք պատրաստվում են ստանձնել փոփոխությունների առաջնորդի դերը, FF3՝ այն առաջնորդների համար, որոնք պատրաստվում են ստանձնել գործառնության ղեկավարների դերը:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն ընդլայնում է առցանց դասընթացները և անցում կատարում առցանց դասընթացներին, չնայած 2019 թվականին դասընթացների մեծ մասն անցկացվել էր դասասեսնյակներում:

2019 թվականին իրականացվել են զարգացման և վերապատրաստման հետևյալ ծրագրերը՝

Արագացված դասընթացների կենտրոնները և հիմնական ծրագրերը, որոնք կազմակերպվել և իրականացվել էին առաջնորդների համար բիզնես բաժնի կողմից (2019թ. մասնակիցների ընդհանուր թիվը՝ 130 աշխատակից), ներառել են հետևյալը՝

- առաջնորդների կամ ապագա առաջնորդների համար արագ առաջնորդության ծրագիր, ներառյալ ծրագրերի կառավարման դասընթացներ, «Առաջնորդության 4 հիմնական դերերը» դասընթացը, բիզնեսի սիմուլյացիա,
- Նոր մենեջերների համար հիմնական (պարտադիր) ծրագրեր՝ առաջնորդություն, իրավիճակային առաջնորդություն, ջուռչինգային առաջնորդության ոճ, LEAP, Excel,
- Խթանող ծրագրեր աշխատակիցների գործունեության բարելավման համար, թիմային արդյունավետության սեմինար փոփոխություններ կատարող առաջնորդների համար, «Արտադրողականություն աճի համար» հետադարձ կապի սեմինարներ:

Տեղական ծրագրերը, որոնց 2019 թվականին մասնակցել է 381 մասնակից, ներառում էին հետևյալը՝

- **9** առևտրային ծրագրի վաճառքի բաժնի աշխատակիցների համար,
- **3** իրավաբանական ծրագիր,
- կայուն զարգացման **3** ծրագրից ավել,
- մատակարարման ցանցի ինտեգրված ծառայությունների **4** ծրագիր (ISCS):


ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԵՆԻԿ ԲՈՒԹԷԼԳ ԲԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ

Բոլոր նորանշանակ ղեկավարներն ընդգրկված էին 2019 թվականի «Հիմնական առաջնորդության ծրագրերում»:

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության մեկ աշխատակցի համար վերապատրաստման ժամերի միջին քանակը կազմել էր **9.01**, տղամարդ աշխատակիցների համար՝ 10.13, կին աշխատակիցների համար՝ 5.04:

Բացի այդ, 232 աշխատակից հաշվետու ժամանակահատվածում պարտավոր էր անցնել կոռուպցիայի դեմ պայքարի դասընթացներ: Համաձայն արդյունքների՝ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը հասել էր իր նպատակին, այն է՝ աշխատակիցների 100%-ը 2019 թվականին ավարտեցին դասընթացները:

2019 թվականին հակակոռուպցիոն դասընթացներ անցած աշխատակիցների բաշխումն ըստ տեսակի




ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը հաջողությամբ ներդրել է «Արտադրողականություն աճի համար» կոչվող կատարողականի կառավարման համակարգը: Համակարգը թույլ է տալիս յուրաքանչյուր աշխատակցին ստանալ եռամսյակային կտրվածքով կատարողականի վերլուծություն և գնահատական, ինչպես նաև կատարողականի և իրավասությունների տարեկան վերլուծություն և գնահատում: Այս գործընթացը փաստաթղթավորվում է առցանց հարթակում և ներառում է սեփական և կառավարչական վերլուծություն, ինչպես նաև անհատական հանդիպումներ: Աշխատանքի կատարողականի ամենամյա վերլուծությունից հետո անցկացվում են տաղանդների վերլուծություններ, որոնց ընթացքում քննարկվում են աշխատակիցների՝ իրենց կարիերային վերաբերող ապագա ծրագրերը: Տաղանդների վերլուծությունների քննարկումից հետո մշակվում են զարգացման անհատական ծրագրեր կամ կատարողականի բարձրացման ծրագրեր:


Կառավարման բարձր և միջին օղակի բոլոր աշխատակիցները «Արտադրողականություն աճի համար» համակարգի միջոցով իրավունք ունեն կանոնավոր կերպով ստանալ կատարողականի վերլուծություն: Գործարանի աշխատակիցները և որոշ գրասենյակային աշխատակիցներ չեն մասնակցում կատարողականի վերլուծություններին: Ընդհանուր առմամբ, 2019 թվականին մասնակցության ընդհանուր մակարդակը կատարողականի կառավարման այս համակարգում կազմել է պահանջներին համապատասխանող աշխատակիցների 95%-ը:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ 2019

2019 թվականին մեկ աշխատակցի դասընթացների ժամերի միջին քանակը՝ ըստ կատեգորիաների



2019 թվականին կատարողականի և կարիերայի աճի կանոնավոր վերլուծություն ստացած բոլոր աշխատակիցների մասնաբաժինը



2019 թվականին ընկերությունը գործարկել է **վերադասներին գնահատելու գործընթացը**, որը թույլ է տալիս աշխատակիցներին եռամսյակային կտրվածքով գնահատել իրենց ղեկավարներին՝ առցանց հարթակում հատուկ հարցաթերթիկ լրացնելով: Բոլոր գնահատականներն անսուղ են: 2019 թվականին վերադասներին գնահատելու գործընթացի մասնակցությունը կազմել է 87%:





**ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ
ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ
և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**



«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերության կորպորատիվ մշակույթի հիմքում է ընկած աշխատակիցների հանդեպ հոգատարությունը և աշխատակիցների պաշտպանությունը: Ընկերության համար շատ կարևոր է վերացնել վտանգները և նվազագույնի հասցնել աշխատավայրում առողջության և անվտանգության (ԱԱԱ) ռիսկերը: Սա կատարվում է արդյունավետ կանխարգելիչ և պաշտպանիչ միջոցների կիրառմամբ՝ ապահովելով անվտանգություն և առողջություն յուրաքանչյուր աշխատակցի համար: Ընկերությունն առավելագույն ջանքեր է գործադրում բոլոր աշխատակիցների համար անվտանգ պայմանների և միջավայրի ստեղծման ուղղությամբ, որպեսզի ապահովի, որ ամենամեծ արժեքը՝ աշխատողների առողջությունը, վտանգված չէ:

ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Աշխատավայրում առողջության և անվտանգության ոլորտում «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է ազգային օրենսդրության, միջազգային չափորոշիչների և ներքին կորպորատիվ Նորմերի համաձայն: Այս նորմերն ուղղված են աշխատակիցների, կապալառուների, այցելուների և այլ անձանց (ուժ վրա ընկերության գործունեությունը կարող է ազդեցություն ունենալ) վրա վնասակար գործառնական ազդեցության ռիսկերի նվազեցմանը և միաժամանակ սպառողների ակնկալիքների բավարարմանը՝ ապահովելով բարձրորակ և անվտանգ արտադրանքներ:

ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունը կիրառում է աշխատավայրում առողջության և անվտանգության կառավարման արդյունավետ համակարգ, որը մշակվել է համապատասխան միջազգային չափանիշներին և առաջադեմ փորձին

համապատասխան: Ընկերությունն ապահովում է անվտանգ աշխատանքային միջավայր, որը հանդիսանում է ISO 45001 ստանդարտի (փոխարինել է OHSAS 18001 ստանդարտին) կառուցվածքային ներդրման արդյունքը: «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունն առաջին ընկերությունն էր «Հելվեթիկ Գրուպ» ընկերությունում, որը ներդրեց առողջության և անվտանգության սերտիֆիկացման ավելի առաջադեմ համակարգ:

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերության՝ աշխատավայրում առողջության և անվտանգության կառավարման համակարգի նպատակն ու ակնկալվող արդյունքները կայանում են աշխատանքային վնասվածքների և աշխատողների առողջության վատթարացման դեպքերի կանխման, ինչպես նաև անվտանգ աշխատավայրի ապահովման մեջ: Ընկերության աշխատակիցների՝ անվտանգության հանդեպ վստահությունն իսկապես հաջողված աշխատանքի և ակնկալվող արդյունքների ապահովման որոշիչ գործոն է: Այդ իսկ պատճառով աշխատավայրում առողջության և անվտանգության կառավարման համակարգը ներդրվել է ընկերության բոլոր ստորաբաժանումներում՝ ներառելով նաև կապալառուներին:

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունը պարբերաբար անցնում է արտաքին և ներքին գնահատումներ և աուդիտներ՝ հաստատելու ընկերության համապատասխանությունը աշխատանքային առողջության և անվտանգության ռիսկերին առնչվող տեղական գործող օրենսդրությանը, միջազգային ստանդարտներին և կորպորատիվ պահանջներին: Բացի այդ, վտանգավոր օբյեկտների հետ աշխատող էլեկտրատեխնիկները և այլ աշխատակիցները ստանում են որակավորման ամենամյա հավաստագրեր, որոնք տրամադրվում են արտաքին որակավորված ընկերությունների կողմից: Այս գործողությունները թիրախավորում են բարձրացնել ընկերության աշխատակիցների տեղեկացվածությունը՝

- ԱԱԱ կառավարման համակարգի արդյունավետության մեջ աշխատակիցների ներդրման մասին, ներառյալ ԱԱԱ կատարողականի բարելավումը,
- ԱԱԱ կառավարման համակարգի պահանջներին չհամապատասխանելու ազդեցությունների և հնարավոր հետևանքների մասին,
- Պատահարների ու դրանց հետ կապված քննությունների հետևանքների մասին,
- Հմտությունների մասին, որոնք կօգնեն խուսափել աշխատանքային իրավիճակներից, որոնք նրանք համարում են սպառնացող և վտանգավոր իրենց կյանքի համար:

Աշխատանքային առողջության և անվտանգության կառավարման համակարգի շրջանակներում «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունը նաև ձգտում է կանոնավոր հաղորդակցման և առաջադեմ փորձի փոխանակման միջոցով համագործակցել ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի հետ՝ բարելավելով աշխատավայրում ռիսկերը կանխելու և նվազեցնելու կարողությունը: «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունը ձգտում է լինել բարձունքում՝ ցուցաբերելով իր առաջատարությունն ԱԱԱ կառավարման ոլորտում: Դա արվում է՝ ընկերության բիզնես պլաններում համապատասխան պրակտիկաներ ինտեգրելով և աշխատավայրում առողջության և անվտանգության հաղորդակցական միջոցառումներ կազմակերպելով, ինչպիսիք են ԱԱԱ նպատակների ամենամյա թարմացումները:

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերության աշխատանքային առողջության և անվտանգության կառավարման համակարգն անցել է արտաքին աուդիտ և ստացել ISO 45001 ստանդարտին համապատասխանության հավաստում: Ընկերության աշխատանքային առողջության և անվտանգության կառավարման համակարգը 2019 թվականին ընդգրկել է աշխատակիցների և կապալառուների հարյուր տոկոսին:

ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունը նախքան նոր կամ ոչ ստանդարտ կապալառուական աշխատանքներ սկսելը պարտադիր իրականացնում է ռիսկերի նախնական գնահատում: Բոլոր կապալառուները պարտավոր են հետևել «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերության կանոններին և չափանիշներին: Ընկերությունն ունի Կապալառուի կառավարման ընթացակարգ, որի նպատակն է երաշխավորել կապալառուի հայտերի ներկայացման գործընթացում բնապահպանական, աշխատանքային անվտանգության և հիգիենայի պահանջների ներառումը: Ընթացակարգի նպատակն է նաև երաշխավորել կապալառուների ու ենթակապալառուների համապատասխան որակավորման և հնարավորությունների առկայությունն ակնկալվող աշխատանքներ կատարելու համար և իրենց համապատասխանությունն ընկերության ներքին կարգավորումներին և ազգային օրենսդրության պահանջներին:

ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերության բիզնես գործունեությունը հիմնված է ամուր մասնագիտական հարաբերությունների մշակույթի վրա, որն իր հերթին հիմնված է արդյունավետ հաղորդակցության վրա: Այդ իսկ պատճառով, ընկերության երկարաժամկետ աճի և հաջողության համար ներքին արձագանք ստանալը շատ կարևոր է:

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունը ստեղծել է կապի համակարգ, որպեսզի բոլոր մակարդակներում գտնվող և տարբեր գործառնություններ իրականացնող աշխատակիցները ներգրավված լինեն անվտանգ և առողջ աշխատանքային պայմանների վերաբերյալ գաղափարների մշակման և իրականացման գործընթացում: Միևնույն ժամանակ ընկերությունն աշխատակիցներին տրամադրում է անհրաժեշտ ուսուցում, ռեսուրսներ և հնարավորություններ արդյունավետ քննարկումներին մասնակցելու համար: Նման պրակտիկայի արդյունքներ են հանդիսանում հստակ սահմանված դերերը և պարտականությունները, ինչպես նաև խորհրդատվություններում աշխատակիցների ակտիվ ներգրավվածությունը:

Եթե աշխատակիցը հայտնվում է մի իրավիճակում, որը կարող է հանդիսանալ վնասվածքի կամ հիվանդության պատճառ, ապա նա հնարավորություն ունի օգտվել ընկերության միասնական մոտեցումից, այն է՝ ԿԱՆԳՆԵԼ, ՄՏԱԾԵԼ, ԳՈՐԾԵԼ, որի նպատակն է դադարեցնել ցանկացած զեկուցված գործառնական գործընթացներ, եթե աշխատակիցների աշխատատեղն անվտանգ չէ: Չեկուցված միջադեպերին հաջորդում են աշխատատեղի ստուգումներ, ինչպես նաև հետագա հնարավոր բացասական ազդեցության աղբյուրների վերացում:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՐԴՂՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության աշխատանքային առողջության և անվտանգության քաղաքականության համաձայն՝ աշխատակիցների համար կանոնավոր կերպով անցկացվում են աշխատավայրում առողջության և անվտանգության մասին վերապատրաստումներ և իրազեկման դասընթացներ: Սա օգտակար է թե՛ ընկերության, և թե՛ աշխատակիցների համար, քանզի ամբողջությամբ հասկանալով ընթացակարգերի էությունը և դրանց հետ կապված հավանական ռիսկերը՝ աշխատակիցները դառնում են ավելի արդյունավետ: ԱՄՆ ուսուցումը նաև պարտադիր է աշխատողների որոշ կատեգորիաների կամ աշխատանքի որոշ կատեգորիաների համար: Ընկերությունը գործի է դնում Է պատշաճ և անվտանգ ընթացակարգերի ապահովման համար անհրաժեշտ բոլոր միջոցները՝ այդպիսով նվազեցնելով ապագայում անկանխատեսելի ծախսերի և արտադրողականության անկման ռիսկերը:

Ընկերությունը դասընթացներ է անցկացնում նոր աշխատակիցներին աշխատանքային անվտանգության հետ ծանոթացնելու նպատակով: Աշխատանքի ընդունումը որոշվում է աշխատակցի՝ արտադրական գործընթացը հասկանալու վստահության և նրա՝ աշխատանքային վտանգները հայտնաբերելու ունակության հիման վրա: Կանոնավոր կերպով անցկացվում են ընդհանուր առողջության և անվտանգության մասին դասընթացներ, որոնք ներառում են աշխատանքային գործընթացների անվտանգության վերաբերյալ հիմնական թեմաները: Նպատակն աշխատակիցների իրազեկման և նրանց առողջությանը և անվտանգությանը վերաբերող ազգային օրենսդրական պահանջներին, ինչպես նաև «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության վերոնշյալ ոլորտին վերաբերող կրպորատիվ չափանիշների համապատասխանության

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՉԵՑՈՒՄ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության՝ աշխատավայրում առողջության և անվտանգության պրակտիկան հատկապես թիրախավորում է վտանգավոր գործառնական ստորաբաժանումները և ընթացակարգերը, ինչպիսիք են ածխածնի արտադրությունը, բարձր և ցածր կոմպրեսորային կայանները, վառելիքի կայանը և հրշեջ միավորի կառավարումը: Հավանական վտանգ կրող աշխատանքների ժամանակ, ինչպիսիք են մեքենաների և մեխանիզմների հետ աշխատանքը, բարձրության վրա աշխատանքը և քիմիական նյութերի հետ աշխատանքը, անվտանգության վիճակը վերահսկվում է ամենօրյա ստուգումներով:

Հայտնաբերված շեղումները կամ բացասական ազդեցության վտանգները չեզոքացնելու նպատակով «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը հաստատել է վտանգների վերացման և աշխատանքային առողջության ու անվտանգության ռիսկերի նվազեցման ընթացակարգ, որը հիմնված է հետևյալ գործողությունների պլանի վրա՝

- վերացնել վտանգը,
- փոխարինել ավելի քիչ վտանգավոր գործընթացներով, գործողություններով, նյութերով և սարքավորումներով,
- կիրառել ինժեներական վերահսկում և աշխատանքի վերականգնակերպում,
- կիրառել կառավարչական վերահսկում, ներառյալ դասընթացներ,
- օգտագործել պատշաճ անհատական պաշտպանիչ սարքավորումներ:

Աշխատանքային առողջության և անվտանգության բարձր չափորոշիչների կիրառման շնորհիվ «Կոկա-Կոլա ՀԲԲ

ապահովումն է: 2019 թվականին այս դասընթացներին մասնակցած աշխատակիցների ընդհանուր թիվը 370 է եղել: Ի հավելումն, ընկերությունը բոլոր բաժինների աշխատակիցների համար կազմակերպում է աշխատանքին չվերաբերող, առողջական վտանգների մասին տեղեկատվական դասընթացներ, որոնք ներառում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են սթրեսը և էրգոնոմիկան:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն իրականացնում է Վարքագծային անվտանգություն, «Walk the Talk» և «Toolbox Talk» ծրագրերը: Վարքագծային անվտանգություն ծրագիրը ձևավորվել է 2019 թվականին՝ կենտրոնանալով աշխատակցի՝ ԱՄՆ դիտարկումների գարգացման մեջ ներգրավվածության վրա: Այս դիտորդներն անցնում են ԱՄՆ հատուկ դասընթացներ ոլորտային իրազեկման և կանոնակարգի մասին: 2019 թվականին աշխատակիցների կողմից իրականացվել է այսպիսի 252 դիտարկում:

«Walk the Talk» ծրագիրը ձևավորվել է՝ նպատակ ունենալով խթանել «ղեկավար-աշխատակից» երկխոսությունը, որի ընթացքում նրանք ավելի են ներգրավվում աշխատավայրում առողջության և անվտանգության օրակարգի և այլ հարակից թեմաների մեջ: 2019 թվականի ընթացքում այսպիսի 29 երկխոսություն է իրականացվել: Նույն կերպ, «Toolbox Talk» ծրագիրը նախատեսում է աշխատավայրում առողջության և անվտանգության թեմաների շուրջ երկխոսություն սկսել ղեկավարի և աշխատակցի միջև: Ամեն ամիս ընկերությունն ընտրում է մեկ կամ երկու երկխոսության թեմա, որոնք էլ ղեկավարները քննարկում են աշխատակիցների հետ: 2019 թվականին «Toolbox Talk» ծրագրի շրջանակներում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը կազմակերպել է 240 երկխոսություն:

Արմենիա» ընկերությունը 2019 թվականին արձանագրել է 920 օր առանց Պատահարների պատճառով կորցված ժամանակի: Պատահարների պատճառով կորցրած ժամանակի գործակիցը (ՊԿԺ)⁵ 2019 թվականին 0.26 է եղել: Հաշվետու տարվա ընթացքում միակ և ցածր կոմպրեսորային կապված վնասվածքը⁶ պատճառվել է առաքման բաժնի աշխատակցի անուշադրության պատճառով: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը նպատակադրվել է 2020 թվականին ունենալ աշխատանքի հետ կապված զրո վնասվածք:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը վերահսկում է նաև փոխադրումներին առնչվող անվտանգության ապահովման մակարդակը ու պատահարների հաճախականությունը՝ հիմնվելով Միլիոն կիրմետրի հաշվով միջադեպերի (ՄԿՀՄ)⁷ թվաքանակի ցուցանիշի վրա: ՄԿՀՄ-ն հաշվետու տարվա ընթացքում կազմել է 3.5 միավոր:

ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունում կիրառվող պատահարների հետաքննության մեխանիզմները, ներառյալ վտանգների բացահայտումը և ռիսկերի գնահատումը, հիմնված են համապատասխան ազգային օրենսդրական պահանջների վրա: Որևէ պատահարի

⁵ Պատահարների պատճառով կորցրած ժամանակի գործակից (ՊԿԺ) = 12 ամիսների ընթացքում տեղի ունեցած պատահարների քանակը, որոնց պատճառով աշխատակիցը մեկ կամ ավելի օր բացակայել է աշխատանքից * 100 / Լրիվ դրույքով աշխատակիցների միջին թվաքանակ

⁶ Կրճանագրման ենթակա՝ աշխատանքի հետ կապված վնասվածքների գործակիցը, որը հաշվարկվում է GRI ստանդարտով, 2019 թվականին 0.25 է եղել

⁷ Միլիոն կիրմետրի հաշվով միջադեպեր (ՄԿՀՄ) = Հաշվետու տարվա ընթացքում գրանցված ճանապարհային պատահարների թիվը * 1,000,000 / Վարած կիրմետրերի ընդհանուր թիվը

կամ անհամապատասխանության դրսևորման դեպքում ընկերությունը զգալի միջոցներ է ներդնում բացասական ազդեցությունները նվազագույնին հասցնելու նպատակով: Յուրաքանչյուր պատահար, դրա ռիսկերի գնահատումը և ուղղիչ և կանխարգելիչ գործողությունների իրականացումը վերահսկվում է՝ ներգրավելով կառավարման ամենաբարձր օղակին:

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Իր բիզնես պլանները և թիրախները ձևակերպելիս «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը հետևում է ռիսկերի և հնարավորությունների գնահատման գործընթացին՝ հաշվի առնելով նախատեսված արդյունքները: Ռիսկերի գնահատման բոլոր ընթացակարգերը կարգավորվում են ISO 31000 ստանդարտի դրույթներով, որոնք ներառում են հետևյալ փուլերը՝ ռիսկերի նույնականացում, ռիսկերի վերլուծություն, ռիսկերի գնահատում, մոնիտորինգ և վերանայում, ռիսկերի կառավարման գործընթացի գրանցում:

Երբ հայտնաբերվում է ռիսկի գործոն, ընկերությունը վերլուծում է, թե արդյոք պետք է կիրառվեն ռիսկի նվազեցման կամ կանխարգելման միջոցներ՝ ընդունելի չափանիշները բավարարելու համար: Ընկերության կողմից անցկացվող բոլոր աշխատանքային գործընթացները (օրինակ՝ արտադրություն, բարձր և ցածր կոմպրեսորներ,

ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽԹԱՆՈՒՄ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն առողջության ապահովագրություն է տրամադրում իր բոլոր աշխատակիցներին, բացի բժշկական ծառայությունների ստանդարտ փաթեթից: Առողջության ապահովագրության ծրագրերը ներառում են նաև բուժման հատուկ տարբերակներ, օրինակ՝ մերսումներ: Բացի այդ, ընկերությունն աջակցում է իր աշխատակիցներին՝ աշխատանքային ժամերից դուրս ապրելու առողջ և ակտիվ ապրելակերպով՝ օգնելով նրանց պահպանել հավասարակշռությունն աշխատանքի և ինքնազարգացման միջև: Ընկերությունը խթանում է բարեկեցության ծրագրեր, որոնց միջոցով աշխատակիցներին տրամադրվում են մարզասրահների անդամություն և բուժօգնման հնարավորություն: Ընկերությունն իր աշխատակիցներին ներգրավում է ոչ միայն «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»

COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿ. ՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ի պատասխան 2020 թվականի մարտին աշխարհում COVID-19 համավարակի մասին Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից կատարված հայտարարությանը՝ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ստեղծեց և իրականացրեց COVID-19 կառավարման գործընթացը՝ հիմնվելով տեղական կարգավորումների և Կոկա-Կոլա ընկերության գործառնական պահանջների վրա: COVID-19 կառավարման գործընթացը ներառում է ռիսկերի կառավարում և գնահատում: Բոլոր աշխատակիցներին տրամադրվել են տեղեկատվական և վերապատրաստման նյութեր, իսկ ընկերության հաստատություններն ապահովվել են տեսողական պատասխաններով և նշումներով, որոնք պարունակում են անձնական հիգիենայի և սոցիալական հեռավորության վերաբերյալ օգտակար տեղեկություններ:

2020Թ-Ի ԾՐԱԳՐԵՐ

- Ունենալ աշխատանքի հետ կապված զրո վնասվածք և հետագա տարիների համար պահպանել նույն ցուցանիշը,
- իրականացնել Վարքագծային անվտանգություն և ծրագիրը Վաճառքի բաժնում,

Այսպիսի դեպքերին միշտ հաջորդում են շարունակական դասընթացներ և կանխարգելիչ միջոցառումներ: Վերջինները ներառում են ռիսկերի գնահատման առկա մեթոդաբանությունների վերանայում, «Toolbox Task»-ի հավելյալ հանդիպումների իրականացում և թաղմացված փաստաթղթավորված տեղեկատվության տարածում և հաղորդակցում բոլոր աշխատակիցների և կապալառուների հետ:

վառելիքի կայան և այլն) գնահատվում են՝ հաշվի առնելով մեխանիկական, էլեկտրական, քիմիական կամ ճնշման հետևանքով առաջացած հավանական վտանգի բնույթը: Այնուհետև ընկերությունը նույնականացնում է հնարավոր ռիսկերի բոլոր աղբյուրները և նրանց համար գնահատական է տալիս՝ հաշվի առնելով առաջացման հավանականությունը (1-շատ անհավանական, 2- անհավանական, 3-հնարավոր, 4-հավանական) և խստությունը (1-աննշան, 2-լուրջ, 3 –խոշոր, 4-ճակատագրական): Հիմնվելով ռիսկերի գնահատման նման մանրամասն մոտեցման վրա՝ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը սահմանում է վերահսկողություն և կանխարգելիչ միջոցառումներ, որոնք ուղղված են առողջության և անվտանգության ռիսկերը նվազեցնելու կամ լիովին վերացնելու: Ցանկացած հայտնաբերված ոչ անվտանգ վարք կամ գործողություն գրանցվում, գեկուցվում և ուսումնասիրվում է ընկերության ղեկավարության կողմից:

ընկերության կողմից կազմակերպված միջոցառումներում, այլև երկրում տեղի ունեցող այլ մարզական և առողջ ապրելակերպին վերաբերող ծրագրերում:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության մարդկային ռեսուրսների կառավարման բաժինն իր աշխատակիցներին հնարավորություն է տալիս անդամագրվել մարզական ակումբներին կամ մարզասրահներին: Որոշակի պայմաններում նման ծառայություն մատուցվում է նաև աշխատակիցների ընտանիքների անդամներին: Այն աշխատակիցների համար, որոնք ցանկանում են աշխատանքի ընթացքում կարճատև ընդմիջում անել, ընկերության հաստատությունների ներսում կան հանգստի գոտիներ, որոնք ապահովված են նաև ֆիզիկական ակտիվության համար (օրինակ՝ սեղանի թենիս):

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն իր աշխատակիցներին թույլ է տալիս և խրախուսում է աշխատել տնից ինքնամեկուսացման նպատակներով: Այն դեպքերում, երբ աշխատակիցները պետք է հանդիպեն հաճախորդների հետ կամ աշխատեն գրասենյակում, ընկերությունը նրանց տրանսպորտային ծառայություններ է տրամադրում: Բացի այդ, նպատակ ունենալով նվազագույնի հասցնել աշխատակիցների և այցելուների միջև սոցիալական շփումը, «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ձեռնարկել է իր տարածքների վերափոխում նվազագույնը 2 մետր սոցիալական հեռավորություն ասպիտվելու նպատակով: Ընկերությունը նաև սահմանել է վարչական նոր կանոններ, ինչպիսիք են հերթափոխի փոփոխությունները և ճաշարանի այցի կանոնները: Միևնույն ժամանակ ընկերությունը յուրաքանչյուր երկու ժամը մեկ իրականացնում է հաճախակի շոշափվող սարքավորումների ախտահանում:

- շարունակել նպաստել անվտանգության մշակույթի զարգացմանը և իրազեկման նախաձեռնություններ իրականացնել բոլոր բաժիններում, ներառյալ Վաճառքի բաժինը:



**ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱԿԱՅՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**



Մեր բնությունը պաշտպանելու պարտավորությունը ներառված է ոչ միայն «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ընդհանուր բիզնես ռազմավարության և քաղաքականության մեջ, այլ նաև արտաջնջվում է ընկերության ամենօրյա գործունեության մեջ: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ձգտում է նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ ներդրելով էներգախնայողական տեխնոլոգիաներ, կրճատելով արդյունաբերական և շուկայում առաջացող թափոնները, ինչպես նաև ներդրումներ կատարելով շրջակա միջավայրի պաշտպանության և հասարակության իրազեկման արտաքին նախաձեռնություններում: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը, խթանելով իր ջանքերը շրջակա միջավայրի պահպանության շուրջ, ձևավորել է երեք առաջնային ոլորտներ՝ ածխածին արտանետումների նվազեցում, ջրի սպառման նվազեցում և շուկայում առաջացող թափոնների վերամշակման գործընթացների ստեղծում:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կայուն զարգացման ռազմավարությունը զգալի արդյունքներ է գրանցել շրջակա միջավայրի պահպանության ոլորտում, հիմնադրման օրվանից՝ 2010 թվականից, ընկերությունը կրճատել է իր ածխաթթու գազի արտանետումների ծավալը մատակարարման շղթայում 37.5%-ով՝ կենտրոնանալով յուրաքանչյուր բաղադրիչի վրա, սկսած տեղական արդյունաբերությունից մինչև շուկայում տեղակայված սառնարանները, և 16%-ով նվազեցրել է ջրի սպառումն արտադրության մեջ:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության մոտեցումը ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից հիմնված է շրջակա միջավայրի կառավարման միջազգային ISO 14001 ստանդարտի վրա: Համայնքում և բնության վրա շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու ընկերության նախաձեռնությունները ղեկավարվում են բնապահպանական ծրագրերը համակարգողի կողմից, մինչդեռ բոլոր աշխատակիցները կրում

են սահմանված կորպորատիվ բնապահպանական սկզբունքներին համապատասխանելու պատասխանատվություն: Բացի այդ, ընկերությունը խրախուսում է իր անձնակազմին հաղորդել ծրագրի միջոցով էներգիայի կամ ջրի ցանկացած կորստի և անհարկի սպառման մասին՝ «Կորստի մոտ» ծրագրի միջոցով՝ բարձրացնելով կառավարման տեղեկացվածությունը ռեսուրսների օգտագործման այն անարդյունավետության վերաբերյալ, որը պետք է հասցեագրվի: 2019 թվականին ընդհանուր առմամբ հաղորդվել է մոտ 269 կորստի դեպք: Աշխատակիցների անձնական պատասխանատվության այս մշակույթն

արդյունավետորեն ինտեգրված է «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիայի» կողմից օգտագործվող ավելի լայն պլանավորման մեխանիզմներում ընկերությունը սահմանում է ջրի և էներգիայի օգտագործման տարեկան և ամսական թիրախներ և վերահսկում է այդ նպատակներին հասնելու իր առաջընթացը


ամսական կտրվածքով: Այս թիրախներն իրագործվում են մասնավորապես ջրի և էներգախնայողության նախաձեռնությունների իրականացման միջոցով, ինչպիսիք են ապակե շշեր լվացող մեքենայի ճնշումն օպտիմալացնող միջոցները, որոնք հանգեցնում են ջրի սպառման նվազեցմանը:

ՓԱԹԵԹՎՈՐՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն օգտագործել է 2,220 տոննա փաթեթավորման նյութեր, որից 1,577 տոննան պլաստիկ (PET) նախաձեռն էին (71%): Երկրորդ ամենաշատ օգտագործվող նյութն ապակին է, որը կազմում է նյութերի ընդհանուր ծավալի 12.3%-ը կամ 273 տոննա: Հաշվետու ժամանակահատվածում ընկերության կողմից փաթեթավորման նպատակով օգտագործվող նյութերի (թղթե պիտակներ) 1.3%-ը վերականգնվող էին:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը, պատասխանատու արտադրությանը ստանձնած իր պարտավորության համաձայն, 2019 թվականին յուրաքանչյուր ամիս ապակուց շշերի 96%-ը վերադարձնում էր շուկայից, որպեսզի կրկին օգտագործի արտադրության մեջ:

Փաթեթավորման նյութերի օգտագործումը 2019 թվականին, %



ԹՎՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ՎԵՐԱՄՇՇԱԿՈՒՄ

Համաձայն շրջակա միջավայրի կառավարման քաղաքականության՝ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը թափոնների կառավարման հարցում իր մոտեցումը ձևավորում է այնպես, որ ավելացնի ընկերության գործունեության արդյունքում առաջացող թափոնների տեսակների վերամշակման մակարդակը և ապահովի բոլոր վտանգավոր թափոնների օգտագործումը՝ օրենսդրության և կորպորատիվ պահանջներին համաձայն: Ընկերությունը ներմուծել է թափոնների տարանջատման համակարգ, որը նախատեսում է առանձին խցիկներ պլաստիկ (PET), թղթի և ընդհանուր թափոնների համար: Հավաքված թափոններն այնուհետև ուղարկվում են վերամշակմանը համապատասխան ընկերություններին: Ընկերությունը վերահսկում է, թե ինչպես են հավաքվում թափոնները և արդյոք տարանջատման համակարգը կիրառվում է պատշաճ կերպով՝ իրականացնելով ամսական աուդիտ: Այս մանրակրկիտ և լավ պլանավորված կառավարման մոտեցման արդյունքում վերամշակել է առաջացած ընդհանուր թափոնների 97.8%-ը և «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը նպատակ ունի հետագայում ևս շարունակել վերամշակումը նույն բարձր տեմպերով:

2019 թՎԱԿԱՆԻՆ ՎԵՐԱՄՇՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎԵՐԱՄՇՇԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱՑԱԾ ԹՎՓՈՆՆԵՐԻ

97.8%

2019 թվականին առաջացած թափոնների ծավալը, տոննա

Թափոնների տեսակը	2019
Ոչ վտանգավոր (վերամշակվող)	521.3
Ոչ վտանգավոր (աղբավայր)	11.5
Վտանգավոր (չվերամշակվող)	1.7
ԸՆԴՀԱՆՈՒՐ	534.5




ԿՈՎԱ-ԿՈՒԱ ՀԵՆԼԵՆԻԿ ԲՈՒԹԵԼԳ ԲԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ

Ինչ վերաբերում է վերամշակման մեթոդներին, ապա ընկերությունը վաճառում է իր ոչ վտանգավոր վերամշակվող թափոնները թափոնների վերամշակման համար հատուկ հարմարություններ ունեցող համապատասխան կազմակերպություններին կամ այն անձանց, ովքեր կարող են դրանք վերաօգտագործել: Վտանգավոր թափոնները, ինչպիսիք են պլաստիկ տոպրակները և մարքեթինգային նյութերը, յուղերը և անվադողերը, որոնք չեն կարող վերամշակվել, ինչպես


նաև ցերեկային լույսի լամպերն ուղարկվում են լիցենզիա ունեցող հատուկ նշանակված կազմակերպություններին: Կազմակերպությունները հաստատված են «Կոկա-Կոլա ՀՔՔ Արմենիա» ընկերության կողմից, որտեղ թափոններն օգտագործվում են էկոլոգիապես անվտանգ եղանակով: Ընդհանուր առմամբ, 2019 թվականին ընկերության կողմից առաջացված թափոնների ծավալը 2018 թվականի համեմատ նվազել է 18.7%-ով և կազմել է 534.5 տոննա:

■ **2017-2019 թթ. առաջացած թափոնների ծավալը, տոննա**



2019 թվականին մեկ լիտր ըմպելիք արտադրելու համար թափոնների ծավալը կամ թափոնների ինտենսիվության գործակիցը նվազել է՝ մեկ լիտրի դիմաց կազմելով 10.2 գրամ, որը նվազել է՝ համեմատելով 2018 թվականին մեկ լիտրի դիմաց ունեցած 12.5 գրամի հետ:

■ **Թափոնների գործակիցը (1 լիտր ըմպելիք արտադրելու համար առաջացած թափոններ, գրամ)**



■ **ԹՎՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

Ներքին թափոնների կառավարման ամբողջական և մանրակրկիտ մոտեցում իրականացնելուց բացի «Կոկա-Կոլա ՀՔՔ Արմենիա» ընկերությունը ձգտում է օրինակ ծառայել և նպաստել թափոնների խնդիրների և վերամշակման մեթոդների մասին հասարակության իրազեկության բարձրացմանը: Այդպես ընկերությունը մշտապես կազմակերպում և աջակցում է սոցիալական նախաձեռնություններին և նախագծերին իր կողմից համաշխարհային մակարդակում հիմնադրված «Աշխարհն առանց թափոնների» ծրագրի շրջանակներում: «Աշխարհն առանց թափոնների» ռազմավարության հիմնական թիրախները կառուցված են երեք հիմնական հենասյուների վրա՝

- 1. Ձևավորում.** նպատակն է ինտեգրել նորարարական մոտեցումներ փաթեթավորման ձևավորման հարցում մինչև 2025 թվականը 100%-ոց առաջնային փաթեթավորման երկրորդական վերամշակմանը հասնելու համար և օգտագործել առնվազն 50% վերամշակված նյութեր՝ որպես համաշխարհային նախաձեռնության մաս: Հայաստանի համար համապատասխանության թիրախը մինչև 2025 թվականը կազմում է 73%:
- 2. Հավաքել.** նախատեսում է մինչև 2030 թվականը հավաքել և վերամշակել համարժեք քանակությամբ արտադրված առաջնային փաթեթավորում՝ շիշ կամ տուփ, որը վաճառում է ընկերությունը:
- 3. Գործընկեր.** ձեռնարկել նախաձեռնություններ, որոնք ուղղված կլինեն տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությանը՝ սպառողների իրազեկության մակարդակը բարձրացնելու և էկոլոգիապես անվտանգ վարքագիծը խթանելու համար:



ԿՈՒԿԱ-ԿՈՒԼԱ ՀԵՆԼԵՆԻԿ ԲՈՒԹԼԻՆԳ ԲԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ



■ **2019 թվականին այս նախաձեռնությունները ներառում էին.**

● **ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՔՐՄԱՆ ՕՐԸ**

«Կոկա-Կոլա ՀՔՔ Արմենիա» ընկերությունը, հետևելով իր հավակնոտ նպատակներին, «Աշխարհն առանց թափոնների» տեսլականի ներքո ակտիվորեն մասնակցում է Համաշխարհային մաքրման օրվան: 2019 թվականին ընկերության աշխատակիցները միացան փողոցների և շրջակա միջավայրի մաքրման այս էկո-նախաձեռնությանը:

- Միջոցառմանը մասնակցել է «Կոկա-Կոլա ՀՔՔ Արմենիա» ընկերության ավելի քան **60** աշխատակից,
- հավաքվել է **60** պարկ աղբ:

● **ՉՐՈ ԹՎՓՈՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԾՐԱԳԻ:**

«Կոկա-Կոլա ՀՔՔ Արմենիա» ընկերությունը և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության փոխըմբռնման հուշագրի ներքո գործարկվել է «Չրո թափոն համայնքներում» ծրագիրը, որի նպատակն է խթանել հասարակությունում թափոնների պատասխանատու մշակման մշակույթը: Ծրագրի իրականացման արդյունքում 2019 թվականին

- երևանում տեղադրվել են **5** աղբաման;
- Թալին քաղաքում կտեղադրվեն **25** աղբաման / փորձնական նախագիծ / 2020 թվականի օգոստոսի դրությամբ:

● **«Կոկա-Կոլա ՀՔՔ Արմենիա» ընկերությունն ակտիվորեն համագործակցում է Հայաստանում «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐԱԴԱՐԱԿԱՆ ԼՈՒՇՈՒՄՆԵՐ» հասարակական կազմակերպության հետ: Այս գործընկերության հիմնական նպատակը նախատեսում է.**

- թափոնների կառավարման ոլորտում շրջակա միջավայրի վերաբերյալ ուսուցում և բիզնեսի նոր հնարավորությունների խթանում;
- թափոնների վերաօգտագործման և վերամշակման կարևորության վերաբերյալ

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԵՎՈՒՅՑ 2019

հասարակության իրազեկության բարձրացում, մասնավորապես դպրոցականների և ուսանողների շրջանում;

- թափոնների տեսակավորման և վերամշակման կենսակերպի խթանում Հայաստանում:
 - որպես այդպիսին, 2019 թվականին «Կոկա-Կոլա ՀՔՔ Արմենիա» ընկերության շնորհիվ **100** դպրոցներ և համալսարաններ ներգրավված էին այդ նախաձեռնությունում,
 - թափոնների տեսակավորման **32** աղբաման տեղադրվել է տարբեր ընկերություններում, դպրոցներում և համալսարաններում,
 - **20** տոննա կոշտ թափոն է հավաքվել:

● **«ԹՎՓՈՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԵՊՔԵՐԻ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒՅՑԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ» ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ**

«Կոկա-Կոլա ՀՔՔ Արմենիա» ընկերությունը մասնակցեց սեմինարին, որը կազմակերպել էր Հայաստանում Ամերիկյան առևտրի պալատի արագ շարժվող սպառողական ապրանքների (FMCG) կոմիտեի թափոնների կառավարման աշխատանքային խումբը՝ կիսելով թափանցիկ կառավարման հաջող մոդելի և իրագործման մոտեցումների վերաբերյալ իր պատկերացումները, ինչպես գործնական, այնպես էլ ինստիտուցիոնալ հեռանկարներին: Քննարկման ընթացքում Կոկա-Կոլա ընկերության կողմից հրավիրված բարձրաստիճան մասնագետների կողմից ներկայացված կարողացան ծանոթանալ միջազգային լավագույն փորձի հետ՝ Հայաստանում կիրառության համար թափոնների կայուն կառավարման լավագույն մոդելն ընտրելու համար: Սեմինարի նպատակն էր ներգրավել ոլորտի ներկայացուցիչներին՝ միավորելու իրենց ջանքերն Արտադրողների ընդլայնված պատասխանատվության /ԱԸԴ/ պրակտիկայի ձևավորման համար՝ նպատակ ունենալով կազմակերպել պետական մարմինների հետ երկու կողմերին ձեռնտու երկխոսություն՝ Հայաստանում թափոնների արդյունավետ կառավարման ներդրման համար:

ԶՈՒՐ


ԶՐԻ ԴՈՒՐՍ ԲԵՐՈՒՄ և ՄՂԱՌՈՒՄ



Որպես «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիայի» արտադրանքի հիմնական բաղադրիչ՝ ջրի սպառումը ենթակա է խիստ կանոնակարգման և կառավարման մոտեցման: Մինչև 2020 թվականն ընկերությունը ձգտում է հասնել ջրի օգտագործման գործակից 30%-ով իջեցմանը՝ 2010 թվականի համեմատ: Ընկերության կողմից 2019 թվականին դուրս բերված ջրի ընդհանուր ծավալը կազմել է 109,003 հազար խորանարդ մետր: Ամբողջ ջուրը դուրս է բերվում ստորգետնյա ջրերի կենցաղային աղբյուրից, որը գտնվում է Ակունք գյուղի մոտակայքում գտնվող ընկերության գործարանից 15 կմ հեռավորության վրա: Զրի հանքայնացման միջին տեմպը 2019 թվականին արտահայտված է որպես ընդհանուր կարծրության ցուցանիշ և կազմում է 50 մգ մեկ լիտրի համար, ինչը համապատասխանում է խմելու ջրի տեխնիկական բնութագրերի ազգային պահանջներին (Առողջապահության նախարարության 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման): Ընկերությունն օգտագործում է «Աղբյուրի ջրի գնահատման» ծրագիրը: Այս ծրագիրը մշակվել է «Կոկա-Կոլա» ընկերության կողմից՝ ջրի որակի հետ կապված հնարավոր ռիսկերը գնահատելու համար և երաշխավորելու այն, որ ընկերության կողմից աղբյուրի շահագործումը չի հանգեցնի ջրի սակավության կամ շրջակա միջավայրի վրա այլ բացասական ազդեցությունների:

Ընդհանուր առմամբ, 2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը սպառել էր 109,003 հազար խորանարդ մետր ջուր: 2019 թվականին 1 լիտր ըմպելիք արտադրելու համար ջրի օգտագործման գործակիցը կամ քաղցրահամ ջրի ծավալը 1.4%-ով ցածր էր 2018 թվականի նույն ցուցանիշից՝ կազմելով համապատասխանաբար 2.08 լիտր և 2.11 լիտր: Այս դինամիկան բացատրվում է ջրի խնայողության միջոցառումներով, որոնք ընկերությունն իրականացրել է հաշվետու ժամանակահատվածում, որոնց թվում է եղել վերալիցքավորվող ապակե շշերը ողողելու համար լվացող մեքենաներում ճնշման օպտիմալացումը:

■ Ջրի օգտագործման գործակից (1 լիտր ըմպելիք արտադրելու համար, լիտր ջուր)



ԿՈՅԱԶՈՒՐ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կողմից կիրառվող կոյաջրերի մաքրման պրակտիկան համապատասխանում է կոյաջրերի արտանետման համաշխարհային ստանդարտներին և կոյաջրերի ստանդարտներին, որոնք ընդունված են Կոկա-Կոլա ընկերության կողմից: Ինչ վերաբերում է կոյաջրերի որակի ազգային կանոնակարգերին հետևելուն, ընկերությունը գործում է Շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված №23 թույլտվության համաձայն (ուժի մեջ է մինչև 2022 թվականի մարտի 10-ը): Որակի վերահսկման և տեխնիկական սպասարկման վարչության անձնակազմն ապահովում է բոլոր պահանջներին համապատասխանությունը և վերահսկում է օրական և շաբաթական կտրվածքով կոյաջրերի մաքրման կայանների աշխատանքը վերաբերելիստանդարտների դրույթներին համապատասխանելու համար:

2019 թվականին կոյաջրերի ընդհանուր ծավալը 2018 թվականի համեմատ նվազել է 4.1%-ով և կազմել 60,052.2 հազար խորանարդ մետր, որոնցից բոլորը մաքրվել են կոյաջրերի տեղում մաքրման կայանների միջոցով: Կոյաջրերի մաքրման կայանի միջով անցնելիս կոյաջրերը վերամշակվում են չեզոքացման մեթոդների և աերոբ մաքրման միջոցներով: Մաքրման գործողությունից հետո կոյաջրերը թափվում են քաղաքային կոյուղիներ:

2019 թվականին ԱՌԱՋԱՑԱԾ ԿՈՅԱԶՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼԸ ՆԿԱԶԵԼ Է

4.1%-ով




ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ և ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Էներգիայի օգտագործման նվազեցումը և, հետևաբար, ածխաթթու գազի արտանետումների նվազումը, «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ռազմավարական առաջնահերթություններն են: Ընկերությունն ունի արտանետումների կրճատման գործողությունների ծրագրեր, դրանց իրականացման համար առաջնային պատասխանատու են կայանի կառավարիչը և տեխնիկական սպասարկման ղեկավարը: Ընկերությունն ամսական կտրվածքով վերահսկում է այս ոլորտում առաջընթացը: Եթե ամսական թիրախները չեն կատարվում, իրականացվում են արմատական պատճառների վերլուծություն և ուղղման գործողություններ:

2019 թվականին ընկերությունն արտադրական նպատակներով օգտագործել է միայն գնված էլեկտրաէներգիա, որի ընդհանուր ծավալը կազմել է 4,518,434 հազար կՎտ * ժամ: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը վառելիքներից սպառել է 402,82 հազար խորանարդ մետր բնական գազ: Ընդհանուր առմամբ, 2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության էներգիայի սպառումը կազմել էր 31,133,865 ՄՋ, որից էլեկտրաէներգիան կազմում էր 16,266,365 ՄՋ իսկ բնական գազը՝ 14,867,500 ՄՋ: 2017-2019 թվականների ընթացքում էներգիայի սպառման փոքր աճի հիմնական պատճառն ընկերության օբյեկտներում նոր ջեռուցման, օդափոխության և օդորակման (HVAC) համակարգերի տեղադրումն է:

Էներգիայի ինտենսիվության գործակիցը 2019 թվականին կազմել է 0.60 ՄՋ, որն օգտագործվում էր մեկ լիտր ըմպելիք արտադրելու համար, ինչը 4.8%-ով ցածր է եղել 2017 թվականի ցուցանիշից: 2019 թվականի համեմատ ընկերությունը ձգտում է 2020 թվականին իր արտադրանքի էներգիայի ինտենսիվությունը կրճատել 7%-ով:

■ Էներգիայի ինտենսիվության գործակից (Էներգիայի ՄՋ մեկ լիտր ըմպելիքի համար)




Էներգիայի սպառման կրճատման միջոցառումների շարքում ընկերությունն իրականացրել է հետևյալը՝ հովացման համակարգերի խողովակաշարերի ջերմամեկուսացում, ապակե շշերի վաղուց մեքենայի ջերմապաշտպան ծածկոցներ, օշարակի սառեցման ժամանակ ջերմության վերականգնում, հին անարդյունավետ ցերեկային լամպերի փոխարինում լուսադիոդային լամպերով: 2019 թվականին Լուսադիոդային լուսավորության նախագծի արդյունքում ընկերությունը 2019 թվականին խնայել է 13,400 կվտ կամ 600,000 դրամ դրամական խնայողություններ: 2020 թվականին Էլեկտրաէներգիայի խնայողության ծավալը նախատեսվում է հասցնել 26,894 կվտ կամ 1,210,230 ՀՀ դրամի չափով ծախսերի կրճատմանը:

«Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա» ընկերությունը հաջողությամբ շարժվում է դեպի իր նպատակը, այն է 2020 թվականին արտանետումների ինտենսիվության գործակիցը (1 և 2 համբեր) նվազեցնել 50%-ով՝ 2010 թվականի մակարդակի համեմատ: 2019 թվականին ջերմոցային գազերի ուղղակի արտանետումների ընդհանուր ծավալը (հումբ 1) կազմել է 2,209 տոննա CO₂: Արտադրանքի շղակցման գործընթացի օպտիմալացման արդյունքում ընկերությունը հասել է արտադրանքի CO₂-ի ուղղակի արտանետումների կրճատմանը 21%-ով (2018 թվականի 291 տոննայից մինչև 2019 թվականի 299 տոննա): Ջերմոցային գազերի անուղղակի արտանետումների ծավալը (հումբ 2) կազմել է 720 տոննա CO₂, ինչը 1.6%-ով ցածր է 2018 թվականի ցուցանիշից:

2019 թվականին ջերմոցային գազերի ուղղակի և անուղղակի արտանետումներ


Արտանետումների տեսակը		Արտանետումներ, տոննա CO ₂
Խումբ 1 (ուղղակի արտանետումներ)	Հանածո վառելիքի այրման արդյունքում արտանետումներ	757
	Ընկերության սեփական տրանսպորտից արտանետումներ	1,140
	Սառնարանային սարքավորումների սառնագեներատորների արտանետումներ	83
	Ուղղակի արտանետումներ արտադրանքներից (CO ₂ ը ըմպելիքներում)	229
	Ընդհանուր ուղղակի արտանետումներ	2,209
Խումբ 2 (անուղղակի արտանետումներ)	Գնված էլեկտրաէներգիայի արտանետումները	720
	Ընդհանուր անուղղակի արտանետումներ	720
Ընդհանուր արտանետումներ		2,929

2017-2019 թվականներին ջերմոցային գազերի արտանետումների դինամիկա, տոննա CO₂



2019 թվականին ջերմոցային գազերի արտանետումների ինտենսիվությունը՝ նվազել է 5.5%-ով՝ 1 լիտր արտադրված ըմպելիքի դիմաց կազմելով 56.06 գրամ CO₂ արտանետում: Համեմատության համար 2018 թվականին մեկ լիտրի դիմաց այն կազմել է 59.30 գրամ:

Ջերմոցային գազերի արտանետումների ինտենսիվության գործակիցը (գրամ CO₂ մեկ լիտր ըմպելիքի համար)



Ջերմոցային գազերի արտանետումների ինտենսիվությունը 2019 թվականին՝ 2018 թվականի համեմատ նվազել է 5.5%-ով

* Ջերմոցային գազերի արտանետումների ինտենսիվությունը հաշվի է առնում CO₂ և HFC արտանետումները



«Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա» ընկերությունը նպատակ է ածխածնի արտանետումների կրճատմանը ոչ միայն իր արտադրական գործընթացում, այլ մատակարարման ողջ շղթայում՝ իրականացնելով արդյունավետ միջոցառումներ չորս հիմնական ոլորտներում.

- արտադրության մեջ Էներգիայի օգտագործման նվազեցում Էներգիայի օգտագործման կրճատման ծրագրերի միջոցով;
- վառելիքի օգտագործման ավելի բարձր արդյունավետությամբ և ածխածնի ցածր արտանետմամբ նոր մեքենաների ձեռքբերում;
- առևտրային սառնարանների փոխարինում Էկոլոգիապես ավելի մաքուր մոդելներով;
- բաշխման ուղիների օպտիմալացում:

2019 թվականին ընկերությունը ձեռք է բերել նոր Cold Drink սարքավորումներ և առաջման բեռնատարներ, որոնք Էկոլոգիապես ավելի մաքուր են շահագործման մեջ: Բացի այդ, «Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա» ընկերությունն իրականացնում է միջոցառումներ, որոնք ուղղված են իր սարքավորումների կողմից առաջացած օզոնային շերտը քայքայող նյութերի նվազեցմանը՝ իր հովացման սարքավորումների մեջ օգտագործելով օզոնային շերտի համար անվտանգ սառնագեներատոր, մասնավորապես R134 և R290:

ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ ԾՐԱԳՐԵՐ

- հասնել 1 լիտր ըմպելիքի համար **1.99** լիտրից քիչ ջրի օգտագործման մակարդակի;
- 2020 թվականին հասնել Էներգիայի օգտագործման **7%**-ով նվազեցմանը՝ 2019-ի համեմատ, և հասնել 0.56 ՄՋ-ի ըմպելիքի Էներգիայի ինտենսիվությանը մեկ լիտր ըմպելիքի համար;
- 2020 թվականին հասնել ածխածնի արտանետումների **3%**-ով կրճատմանը՝ 2019-ի համեմատ;
- պահպանել 2019 թվականի թափոնների վերամշակման բարձր տեսակետի արդյունքը (**98.6%**):





**ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՏԵՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ**



Համայնքներին աջակցելը «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կայունության մոտեցման հիմքում ընկած չորս ռազմավարական նպատակներից մեկն է: Ընկերությունը գիտակցում է, որ բիզնեսը կախված է այն համայնքներից, որտեղ նա գործում է, և այն կարող է լինել միայն նույնքան հաջող և կայուն, որքան նրանք: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը հետևում է ընկերության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականությանը, որը տարածվում է բոլոր այն երկրներում որտեղ «Կոկա-Կոլա ՀԲԲ»-ն գործունեություն է ծավալում:


ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Կայուն զարգացման նպատակով շահակիցների և համայնքների հետ ներգրավվելու նպատակով ընկերությունը համագործակցում է ՀՀ կառավարության և ոչ առևտրային կազմակերպությունների հետ և շարունակաբար ներդրումներ է կատարում տարբեր նախագծերում: Համայնքների աջակցության ծրագրերն ուղղված են հետևյալ ռազմավարական երեք ոլորտներին.

- Երիտասարդների ուժեղացում
- Առանց թափոնների աշխարհ
- Համայնքների բարեկեցություն

Համայնքներում ներդրումներն իրականացվում են կանխիկ վճարումների, նվիրատվությունների, աշխատակիցների կամավորության և/կամ արշավների տեսքով, որոնք իրականացվում են աշխատակիցների կողմից: Ընդհանուր առմամբ, 2019 թվականին «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը տեղական համայնքների զարգացմանն ուղղված ծրագրերում ներդրել է 25,293,649 ՀՀ դրամ, որից 72% -ը հատկացվել է «Երիտասարդների հզորացում» ծրագրին: Համեմատության համար նշենք, որ 2020 թվականի վեց ամսվա ընթացքում ընկերությունը սոցիալական ծրագրերում ներդրել է ընդհանուր 62,306,960 ՀՀ դրամ. այս գումարի կեսից ավելին (36,375,000 ՀՀ դրամ) ծախսվել է համայնքների աջակցության վրա՝ COVID-19 համաճարակից պայքարի շրջանակներում: Ընդհանուր առմամբ, 2019 թվականի

Սոցիալական ներդրումներ 2019 թվականին



25,293,649 ՀՀ դրամ

ընթացքում և 2020 թվականի սկզբում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը սոցիալական ծրագրերում և նախաձեռնություններում ներդրել է 87,600,609 ՀՀ դրամ:

Նախագծերը մանրակրկիտ զեկուցվում և գնահատվում են իրականացման տարբեր փուլերում: Ընկերությունը տարեկան կտրվածքով իրականացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում: Ընկերությունն այնուհետև իր շահակիցների և տեղական համայնքների ներկայացուցիչների շրջանում տարածում է սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման արդյունքները: Բացի այդ, ընկերությունն իրականացրել է հեղինակավոր հարցում և հետազոտություն 2020 թվականին:


ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Երիտասարդների գործազրկությունը կարևոր մարտահրավեր է շատ շուկաներում: Այդ իսկ պատճառով, «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը զգալի ռեսուրսներ է ներդրում երիտասարդներին աջակցելու գործում՝ կրթական ծրագրեր իրականացնելով, պրակտիկա առաջարկելով, ինչպես նաև անապահով երիտասարդներին զարգացնելով՝ հմտությունների ուսուցման և մասնագիտական կապերի ստեղծման միջոցով:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը մեկնարկել է «Երիտասարդների ուժեղացում» նախագիծը 28 երկրներում, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը: Ծրագիրն ուղղված է ամբողջ աշխարհում մինչև 2020 թվականը կես միլիոն երիտասարդների ուժեղացմանը: Երիտասարդներին հզորացնելու և օժանդակելու պարտավորությամբ եռամյա նախաձեռնությունը Հայաստանում մեկնարկել է 2018 թվականին՝ իմաստալից և համապատասխան աշխատանքային հնարավորություններ ուսումնասիրելու և գտնելու հարցում:

Ծրագրի դասընթացավարները մասնակիցներին մոտիվացնում են իրենց մարզում կարիերան շարունակելու և գործատուների հետ կապ հաստատելու նպատակով: 2019 թվականին ծրագրի շրջանակներում Հայաստանի ամբողջ տարածքում, ներառյալ Արցախ, ընկերությունը ներգրավեց, ընդհանուր առմամբ, 2648 երիտասարդի:

Սոցիալական ներդրումներ 2020 թվականին



62,306,960 ՀՀ դրամ

Հետազոտության նպատակն էր հիմնական շահակիցներից և տեղական համայնքներից արձագանք ստանալ կայունության և ԿՄՊ նախաձեռնությունների վերաբերյալ: Այն նաև օգնում է ավելի լավ հասկանալ մարդկանց սպասելիքներն ընկերությունից՝ նպաստելով տեղական համայնքների հետ ավելի արդյունավետ հաղորդակցման և արդյունավետ աշխատանքի: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության առողջ ապրելակերպի քարոզչության, կրթության հովանավորչության և երիտասարդության զարգացմանն առնչվող նախաձեռնությունները հայ հասարակության համար առավելագույն կարևորություն ունեցող սոցիալական ծրագրեր են:





2020 թվականից սկսած «Dasaran.am»- ի հետ համագործակցության միջոցով ծրագիրը ընդլայնվել է առցանց ձևաչափի : «Dasaran.am»-ը Հայաստանում հիմնված ծրագրային ապահովման ծառայություն իրականացնող կազմակերպություն է, որը ստեղծում է տեխնոլոգիա՝ կոչված նպաստելու կրթական և տեխնոլոգիական զարգացմանը և բարելավելու ուսանողների կատարողականը, ուսուցիչների կարողությունները և կրթական որոշումների կայացումը: Համագործակցության այս շրջանակը հնարավորություն տվեց «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությանը ընդլայնել ծրագիրը՝ նպաստելով երիտասարդ մասնակիցների կարիերայի զարգացմանը սկսած դպրոցական տարիքից:

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ջրային ռեսուրսների կայունությունը «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության գործունեության հիմնական բաղադրիչն է: 2018 թվականին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) և «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր՝ ջրային ռեսուրսների պաշտպանության հարցում հայ ժողովրդի հետ համատեղ ջանքերն առաջ տանելու համար: Նոր համատեղ նախագիծը բարձրացրեց հասարակության իրազեկությունը Արարատյան դաշտում ջրի խնայողության, ջրի արդյունավետ օգտագործման և ջրի կայուն կառավարման կարևորության վերաբերյալ:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության փորձը հաղորդակցության և հանրային իրազեկման ոլորտում օգնեց աջակցել USAID- ի «Ջրային ռեսուրսների մասնակցային օգտագործում և արդյունավետություն (PURE Water)» ծրագրի գործունեությանը, որն իրականացվել է «Քաղաքային կայուն զարգացման» հիմնադրամի համար: Ջրային ռեսուրսների անարդյունավետ կառավարման պատճառով Արարատյան դաշտի համայնքների խմելու և ոռոգման ջրի օգտագործման հնարավորությունները խիստ սահմանափակ են: Մինչ կլիմայի փոփոխությունը մեծացնում էր ոռոգման ջրի պահանջարկը, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը հանգեցրեց ստորերկրյա ջրային ռեսուրսների կտրուկ սպառման:

Համագործակցության արդյունքում 2018 և 2019 թվականներին մեկնարկել են րիտասարդ հայերին ուղղված հասարակության իրազեկման տարբեր միջոցառումներ և ծրագրեր, և Արարատյան դաշտի բնակիչներին կրթել ջրի հետ կապված կարևոր մարտահրավերների, ինչպես նաև ջրային ռեսուրսների պատասխանատու և արդյունավետ կառավարման կարևորության մասին:

2020 թվականի ծրագրի նպատակները ներառում են.

- մասնագիտական զարգացման անցանց ծրագրի մասնակիցների թիվը հասցնել **8,000**-ի
- ներգրավել **10,000** երիտասարդների՝ կյանքի և բիզնեսի հմտությունների զարգացման առցանց դասընթացներին և առաջնորդության սեմինարներին մասնակցելու համար
- «Երիտասարդների հզորացում» ծրագրի շրջանակներում կազմակերպել առաջնորդության **10** սեմինար



«PURE Water» ծրագրի նպատակը ջրի արտադրողականության, արդյունավետության և որակի բարձրացումն էր հիմնականում քաղաքացիների մասնակցության միջոցով, ինչպես նաև վարքի փոփոխության խթանումը՝ Արարատյան դաշտում ստորերկրյա ջրերի արդյունահանման տեմպը նվազեցնելու համար: Այս նպատակներն իրագործվել են հետևյալ բաղադրիչների իրականացման միջոցով.

- նպաստել ջրային ռեսուրսների պահպանմանը և համալրմանը
- տեղական մակարդակում բարձրացնել ջրի կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկությունը հանրային կրթության և համայնքային նախագծերի միջոցով՝
- երիտասարդության և տեղական ինքնակառավարման մարմինների շրջանում իրականացնել շահառուների վարքագծի փոփոխության վերաբերյալ համապատասխան միջամտությունների
- ստեղծել վարքի դրական փոփոխություն ջրային ռեսուրսների պահպանման շուրջ

«PURE Water» ծրագրի շրջանակներում ընկերությունն իրականացրել է նոր արշավ՝ «Ջուրը յուրահատուկ է. յուրաքանչյուր կաթիլ թանկ է»՝ աջակցելու վարքագծային փոփոխություններին, համայնքներին և արդյունաբերություններին՝ ջրային ռեսուրսների օգտագործման և կառավարման կոնտեքստում: Այս արշավի հիմնական հաղորդագրությունը տեղական համայնքներում տարածվել է ընկերության կողմից իրականացվող այլ միջոցառումների և գործողությունների միջոցով՝ ներառյալ վարդավառի տոնակատարությունը, Ջրի մոնիտորինգի համաշխարհային օրը և Ջրերի մաքրման համաշխարհային օրը: Այս միջոցառումների ընթացքում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը համայնքի անդամներին տրամադրեց ջուր և ընկերության կայուն և պատասխանատու բիզնես պրակտիկայի վերաբերյալ կազմակերպեց ներկայացում:

«PURE Water» ծրագրի շրջանակներում կազմակերպված այլ արշավներ.

- **Երկրի օր** - արշավի պլանավորում և պատրաստում
- **Կլիմայի համաշխարհային օր** - ուսումնական շրջայց դեպի խոնավ տարածքներ
- **Շրջակա միջավայրի համաշխարհային օր** - մեկ միջոցառում՝ Վեդի համայնքում
- **Ջրի մոնիտորինգի համաշխարհային օր** - մրցույթ: Երիտասարդների և համայնքի այլ անդամների կողմից մշակված ջրի և շրջակա միջավայրի վերաբերյալ տեսանյութեր
- **Ջրի միջազգային օր**





ՉԵԿՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ



ՉԵԿՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ և ՈՐԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվետվությունում ներկայացված ենթակա թեմաների որոշման մոտեցումը հիմնված էր GRI Ստանդարտների սկզբունքների վրա՝ զեկույցի բովանդակությունը որոշելու համար:

ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԱՈՒՍԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Չեկույցը բացահայտում է շահակիցների շահերն ու ակնկալիքները ներկայացնող թեմաները: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը պարբերաբար հաղորդակցվում է շահակիցների հետ՝ նրանց առավել կարևոր առաջնահերթությունները որոշելու համար և հաշվի է առնում հաշվետվության պատրաստման ժամանակ նման փոխգործակցության արդյունքները:

ԿԱՑՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՂՍ

Չեկույցը պարունակում է ընկերության կայուն զարգացման տնտեսական, սոցիալական և բնապահպանական հայեցակետերի վերլուծություն, որոնք կարող են օգտագործվել բիզնեսի առանցքային գործընթացներում: Ընկերությունը գիտակցում է, որ երկարաժամկետ ռազմավարական պլանավորումն ընկած է կայուն զարգացման հիմքում: Այսպիսով, զեկույցում զգալի ուշադրություն է դարձվում կայացված որոշումների առավել լայն հետևանքներին՝ գնահատելով ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցությունը Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

ԷԿՎԱՆՈՒԹՅՈՒՆ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությանը պատասխանատվության ենթարկելու համար, սույն զեկույցում հիմնական ուշադրությունը դարձվում է զգալի տնտեսական, սոցիալական կամ բնապահպանական հետևանքներ ունեցող թեմաներին: Կայուն զարգացման առանցքային կառավարչական մոտեցումները, արդյունքները, նպատակները, հնարավորությունները և ապագա մարտահրավերները շահակիցներին տալիս են անհրաժեշտ տեղեկատվություն՝ որոշումներ կայացնելու համար:

ԱՄԲՈՂՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերլուծությունը հաստատող փաստացի ստուգվող տվյալները շահակիցներին տրամադրում են ամբողջական տեղեկատվություն՝ կայուն զարգացման վրա «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության զգալի ազդեցությունը հասկանալու համար:

Չեկույցը պատրաստվել է այնպես, որ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության բոլոր շահակիցներին տրվի ամբողջական, ճշգրիտ և հստակ տեղեկատվություն, որը նրանք կարող են օգտագործել «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության տարեկան արդյունքներին և ծեռքերումներին հետևելու համար: Չեկույցի որակը որոշելու համար զեկույցի պատրաստման մոտեցումը կազմվել է GRI Ստանդարտների սկզբունքների վրա՝ **ճշգրտություն, հավասարակշռություն, պարզություն, համադրելիություն, հուսալիություն, արդիականություն:**

ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

Շահակիցների հետ շարունակական հաղորդակցման ընթացքում «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը սահմանել է առանցքային շահակիցները, որոնց շահերն առաջնային են եղել: Չեկույցի նպատակների համար էական թեմաներ որոշելիս հաշվի են առնվել շահակիցների շահերը:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը իր էականության մեթոդաբանությունը համապատասխանեցրել է GRI Ստանդարտների դրույթներին: Դա ներառում էր հարցազրույցների անցկացումը կամ հարցաթերթիկների ուղարկումն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին: Հիմնական թեմաները հետևողականորեն վերլուծվում են սույն հաշվետվության համապատասխան գլուխներում՝ կառավարչական մոտեցման և կատարողականի հատուկ ցուցանիշների որակական նկարագրության միջոցով:

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության 2019 թվականի Կայուն զարգացման զեկույցի պատրաստման նպատակով անցկացվել է շահակիցների առջնաց հարցում: Այն պարունակել է հարցեր, որոնք վերաբերում էին կայուն զարգացման յուրաքանչյուր կետի կարևորությանը և «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության ազդեցությանն այդ թեմաների վրա: Հարցման արդյունքներն օգտագործվել են կառուցելու էականության մատրիցան:




Սույն զեկույցն ուղղված է ներկայացնել «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության կողմից 2019 թվականին կիրառվող կորպորատիվ պատասխանատվության ռազմավարության մանրամասն նկարագրությունը և ընկերության կայուն զարգացման և բիզնեսի գործունեության ծեռքերումները:

Սույն հաշվետվությունը «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության առաջին զեկույցն է, որը պատրաստվել է Global Reporting Initiative (GRI) ստանդարտների պահանջներին համապատասխան: Սա ընկերության կողմից տեղեկատվության բացահայտման թափանցիկության և որակի բարձրացման համար կարևոր քայլ է, որը ցույց է տալիս «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության առաջատարությունը Հայաստանում հաշվետվությունների համաշխարհային լավագույն փորձի առաջխաղացման գործում:

Սույն զեկույցի բովանդակության պատրաստման ժամանակ ընկերությունը բացահայտել և վերլուծել է իր գործունեության տնտեսական, սոցիալական և բնապահպանական հայեցակետերը, և այդ վերլուծության արդյունքները ներկայացրել է զեկույցում: Հասկանում ենք, որ թափանցիկ Կայուն զարգացման զեկույցը հանդիսանում է մեր շահակիցների հետ արդյունավետ հաղորդակցության որոշիչ գործոն, առանց որի հաջող բիզնեսը հնարավոր չէ: Այդ իսկ պատճառով «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը մշտապես աշխատում է հաշվետվությունների իր փորձի կատարելագործման ուղղությամբ՝ զգալի ուշադրություն դարձնելով ոչ միայն ներքին կատարողականին, այլ նաև արտաքին ազդեցությանը: Շահակիցների հետ հաղորդակցությունը նոր հեռանկար է տալիս, որը թույլ է տալիս բացահայտել առկա խնդիրները և ստանալ նոր գաղափարներ այն մասին, թե ինչպես բարելավել ընկերության գործունեության արդյունքները: Չեկույցը ցույց է տալիս, թե ինչպես է «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունն իր ներդրումն ունենում ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների իրականացման գործում: Ընկերությունը հատկապես հավատարիմ է այն գործունեությանը, որը մեծապես նպաստում է կայուն զարգացման նպատակներին հասնելուն և ձգտում է իր բիզնես գործունեության բոլոր հայեցակետերում ամենօրյա կտրվածքով ինտեգրել կայուն զարգացումը: COVID-19 համավարակի ներքո մենք կարծում ենք, որ կայուն զարգացման սկզբունքների ինտեգրումը բիզնես ռազմավարությունում պետք է դառնա բոլորի գլխավոր առաջնահերթությունը, և «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը ձգտում է առաջ անցնել բոլորից և օրինակ ծառայել որպես պատասխանատու արտադրող:

Շահակից խումբ	Ներգրված կազմակերպություններ	Փոխգործակցության մեթոդներ
 ԳՈՐԾԸՆԿԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ	<ul style="list-style-type: none"> «ԱՅ ԷՄ ԱՌ» -Միջազգային Մարքեթինգային Հետազոտություններ «Հիտեքս Պլաստիկ» ՓԲԸ «ԷՅԷՄ-ՓԻՋԻ Գրուպ» ՍՊԸ «Ալեքս Հոլդինգ» ՍՊԸ «Ապավեն» ՍՊԸ 	Անհատական հանդիպումներ, հիմնական միջոցառումների և նվաճումների տոնակատարությունների հրավերներ (շաբաթական կտրվածքով)
 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, ԱՌԱՏՐԻ ՊԱԼԱՏ	<ul style="list-style-type: none"> Ամերիկայի Առևտրի Պալատ Եվրոպական Բիզնես Ասոցիացիա Հայաստանի Արդյունաբերողների և Գործարարների Միություն 	Խորհրդի նիստերը և կապեր միջոցառումների միջոցով (շաբաթական կտրվածքով)
 ՀԱՃԱԽՈՐԴ/ԱՌԱՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ	<ul style="list-style-type: none"> Ապավեն McCann Yerevan 	Ամենօրյա փոխգործակցություն, ներգրավվածություն ընկերության նախագծերում, առանցքային նախաձեռնությունների հրավեր (օրական կտրվածքով)
 ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ	<ul style="list-style-type: none"> «Պան Մեդիա» ՍՊԸ 	SMM engagement, online media and TV channels engagement (for each initiative)
 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	<ul style="list-style-type: none"> «Օրրան» Բարեգործական հասարակական կազմակերպություն ԱՄՆ ՄԶԳ 	Ամենօրյա աշխատանք, ներգրավվածություն ընկերության նախագծերում (օրական կտրվածքով)
 ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ	<ul style="list-style-type: none"> ՄԱԿ-ի Չարգացման ծրագիրը Հայաստանում «ՈՒրբան» Հիմնադրամ 	Engagement in relevant project activities
 ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ	<ul style="list-style-type: none"> ՀՀ կառավարություն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Առողջապահության նախարարություն Երևանի Զաղաքապետարան 	Պաշտոնական նամակներ, հանդիպումներ, համապատասխան սեմինարների և միջոցառումների հրավերներ (ամսական կտրվածքով)
 ԴԵՄՊԱՆԱՏՆԵՐ	<ul style="list-style-type: none"> Հունաստանի դեսպանատուն ԱՄՆ դեսպանատուն 	Պաշտոնական նամակներ, հանդիպումներ, համապատասխան սեմինարների և միջոցառումների հրավերներ (ամսական կտրվածքով)
 ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	<ul style="list-style-type: none"> Հայաստանի ամերիկյան համալսարան 	Organization of factory tours for students (on a monthly basis)

ԷՎԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏՐԻՑԱ



Տնտեսական, բնապահպանական և սոցիալական ազդեցության էականությունը

- Կլիմայի փոփոխություն, արտանետումներ և էներգաարդյունավետություն
- Փաթեթավորում, վերամշակում և թափոնների կառավարում
- Զրային ռեսուրսների արդյունավետ կառավարում
- Կայուն մատակարարում և մատակարարման շղթայի կառավարում
- Կորպորատիվ կառավարում, բիզնես էթիկա և հակակոռուպցիոն քաղաքականություն
- Պատասխանատու մարքեթինգ
- Ներդրում և ներգրավվածություն համայնքում
- Մարդու իրավունքներ, բազմազանության սկզբունքներ և հավասար հնարավորություններ
- Աշխատակիցների բարեկեցություն, զարգացում և ներգրավվածություն
- Արտադրանքի որակ
- Առողջություն և արտադրանքի անվտանգություն
- Ուղղակի և անուղղակի տնտեսական ներդրումներ
- Կանանց տնտեսական հզորացում
- Աշխատանքային առողջություն և անվտանգություն

Եական թեմա	Բացահայտման համար	Բացահայտման անվանում	Էջը զեկույցում	Հղում զեկույցի բաժնում և մեկնաբանություններում
GRI 206: Հակամրցակցային վարքագիծ 2016թ.	206-1	Հակամրցակցային վարքի, հակամենաշնորհային և մենաշնորհային պրակտիկայի համար դատական հայցերը	-	2019 թվականի ընթացքում եղել է չորս դեպքերի քննություն: – 2015-2016 թվականներին «Կոկա-Կոլա ՀԲԸ Արմենիա» ընկերության դեմ PCI-ի հարուցած գործը (ներկայումս գործը գտնվում է դատաքննության փուլում), – 2015-2016 թվականներին PCI-ի դեմ «Կոկա-Կոլա ՀԲԸ Արմենիա» ընկերության հարուցած գործը (ներկայումս գործը գտնվում է դատաքննության փուլում), – գործը հարուցվել է Նախկին գործընկերոջ կողմից ՏՄՊԳՀ-ի պահանջի հիման վրա (գործը փակվել է հետաքննության հիմքերի բացակայության պատճառով); – «Կոկա-Կոլա ՀԲԸ Արմենիա» ընկերության կողմից ՏՄՊԳՀ ծանուցման դեմ հարուցված գործը (գործը կարճվել է 2020 թ-ին ՝ հիմնվելով ՏՄՊԳՀ-ի միջնորդության վրա, որ այդ ծանուցագիրը վարչական ակտ չէ և լրացուցիչ պարտավորություններ չի ստեղծում «Կոկա-Կոլա ՀԲԸ Արմենիա» ընկերության համար):
Բնապահպանական բացահայտումներ				
GRI 103: Դեկավարման մոտեցում 2016թ.	103-1	Եական թեմայի և դրա սահմանների բացատրությունը	48-55	Շրջակա միջավայրի պաշտպանություն
	103-2	Դեկավարության մոտեցումը և դրա բաղադրիչները		
	103-3	Դեկավարման մոտեցման գնահատում		
GRI 301: Նյութեր 2016թ.	301-1	Օգտագործված նյութերը ըստ քաշի կամ ծավալի	49	Շրջակա միջավայրի պաշտպանություն
	301-3	Վերամշակման արտադրանք և դրանց փաթեթավորման նյութերը	49	Շրջակա միջավայրի պաշտպանություն
GRI 302: Էներգիա 2016թ.	302-1	Դեկավարման մոտեցման բացահայտում	53	Շրջակա միջավայրի պաշտպանություն
	302-3	Էներգիայի ինտենսիվությունը	53	Շրջակա միջավայրի պաշտպանություն
	302-4	Էներգիայի սպառման նվազեցումը	53	Շրջակա միջավայրի պաշտպանություն
GRI 303: Ջուր և կետաջրեր 2018թ.	303-1	Ջրի հետ փոխազդեցությունը ՝ որպես ընդհանուր ռեսուրս	52	Շրջակա միջավայրի պաշտպանություն
	303-2	Ջրի արտանետման հետ կապված ազդեցությունների ղեկավարումը	52	Շրջակա միջավայրի պաշտպանություն
	303-3	Ջրի հեռացումը	52	Շրջակա միջավայրի պաշտպանություն
	303-4	Ջրի արտանետումը	52	Շրջակա միջավայրի պաշտպանություն
	303-5	Ջրի սպառումը	52	Շրջակա միջավայրի պաշտպանություն
GRI 305: Արտանետումներ 2016թ.	305-1	Ջերմոցային գազերի ուղղակի արտանետումները (շրջանակ 1)	54	Շրջակա միջավայրի պաշտպանություն
	305-2	Ջերմոցային գազերի անուղղակի արտանետումները (շրջանակ 2)	54	Շրջակա միջավայրի պաշտպանություն
	305-4	Ջերմոցային գազերի արտանետումների	54	Շրջակա միջավայրի պաշտպանություն
	305-5	Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցումը	54-55	Շրջակա միջավայրի պաշտպանություն
	GRI 306: Կեղտաջրեր և թափոններ 2016թ.	306-1	Ջրի հեռացումը ըստ որակի և վայրի	52
306-2		Թափոնները ըստ տեսակի և հեռացման մեթոդի	49-50	Շրջակա միջավայրի պաշտպանություն
306-3		Չգալի արտահոսքեր	-	Հաշվետու ժամանակահատվածում վտանգավոր նյութերի ոչ մի արտահոսք չի արձանագրվել
306-4		Վտանգավոր թափոնների տեղափոխում	-	Ընկերությունը վտանգավոր թափոններ չի տեղափոխում
GRI 307: Բնապահպանական պահանջների համապատասխանությունը 2016թ.	307-1	Բնապահպանական օրենքներին և կանոնակարգերին անհամապատասխանությունը	-	Հաշվետու ժամանակահատվածում բնապահպանական օրենքներին և կանոնակարգերին անհամապատասխանություններ չեն արձանագրվել
GRI 308: Մատակարարի բնապահպանական գնահատումը 2016թ.	308-1	Նոր մատակարարներ, որոնք ստուգվել են բնապահպանական չափանիշներով	19	Մեր մատակարարման շղթան
	308-2	Մատակարարման շղթայի բացասական բնապահպանական ազդեցությունը և ձեռնարկված միջոցները	19	Մեր մատակարարման շղթան

Եական թեմա	Բացահայտման համար	Բացահայտման անվանում	Էջը զեկույցում	Հղում զեկույցի բաժնում և մեկնաբանություններում
Սոցիալական բացահայտումներ				
GRI 103: Դեկավարման մոտեցում 2016թ.	103-1	Եական թեմայի և դրա սահմանների բացատրությունը	32-39; 42-45; 58-63; 16-19	Մեր թիմը, աշխատավայրում առողջություն և անվտանգություն: Աջակցություն տեղական համայնքներին: Արտադրանքի որակը և սպառողների անվտանգությունը: Մեր մատակարարման շղթան
	103-2	Դեկավարության մոտեցումը և դրա բաղադրիչները		
	103-3	Դեկավարման մոտեցման գնահատում		
GRI 401: Աշխատանք 2016թ.	401-1	Նոր աշխատակիցների ընդունումը, և աշխատակիցների արտահոսքը	34	Մեր թիմը
	401-2	Լրիվ դրույքով աշխատողներին տրամադրվող արտոնությունները, որոնք չեն տրամադրվում ժամանակավոր կամ կես դրույքով աշխատողներին	39	Մեր թիմը
	401-3	Ծնողական արձակուրդը	39	Մեր թիմը Սպասվում էր, որ «Կոկա-Կոլա ՀԲԸ Արմենիա» ընկերության մեկ աշխատակցուհին աշխատակից պետք է խնամքի արձակուրդ վերցներ 2019 թվականին, և նա օգտվել է այդ իրավունքից: Մեկ աշխատակցուհին աշխատանքի վերադարձել էր իսկապես արձակուրդի ավարտելուց հետո և դեռևս աշխատել է հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքի վերադառնալուց հետո 12 ամիս անց, և մեկ աշխատակցուհի հաշվետու ժամանակահատվածում լքել է ընկերությունը՝ երեխայի խնամքի արձակուրդից վերադառնալուց հետո:
GRI 402: Աշխատանքային / կառավարման հարաբերություններ 2016թ.	402-1	Գործառնական փոփոխությունների վերաբերյալ նվազագույն ծանուցման ժամկետներ	-	Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի, «Կոկա-Կոլա ՀԲԸ Արմենիա» ընկերությունն իր աշխատակիցներին և նրանց ներկայացուցիչներին ծանուցում է տալիս գործառնական նշանակալի փոփոխությունների իրականացումից 4-8 շաբաթ առաջ, որոնք կարող են եսպես ազդել նրանց վրա
GRI 403: Աշխատավայրում առողջություն և անվտանգություն 2018թ.	403-1	Աշխատավայրում առողջություն և անվտանգություն կառավարման համակարգը	42-43	Աշխատավայրում առողջություն և անվտանգություն
	403-2	Վտանգի բացահայտում, ռիսկի գնահատում և միջադեպերի հետաքննություն	44-45	Աշխատավայրում առողջություն և անվտանգություն
	403-3	Աշխատավայրում առողջության ծառայություններ	44-45	Աշխատավայրում առողջություն և անվտանգություն
	403-4	Աշխատողների մասնակցությունը, խորհրդատվությունը և հաղորդակցությունը աշխատանքային առողջության և անվտանգության մեջ	43-45	Աշխատավայրում առողջություն և անվտանգություն
	403-5	Աշխատողների ուսուցումը աշխատավայրում առողջության և անվտանգության վերաբերյալ	44	Աշխատավայրում առողջություն և անվտանգություն
	403-6	Աշխատողների առողջության ամրապնդումը	45	Աշխատավայրում առողջություն և անվտանգություն
	403-7	Աշխատանքային առողջության և անվտանգության հետևանքների կանխումը և մեղմացումը, որոնք անմիջականորեն կապված են գործարար հարաբերությունների հետ	44-45	Աշխատավայրում առողջություն և անվտանգություն
	403-8	Աշխատանքային առողջության և անվտանգության կառավարման համակարգի մեջ ընդգրկված աշխատակիցները	43	Աշխատավայրում առողջություն և անվտանգություն
	403-9	Աշխատանքի հետ կապված վնասվածքներ	44-45	Աշխատավայրում առողջություն և անվտանգություն
	403-10	Աշխատանքի հետ կապված հիվանդությունները	-	Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքի հետ կապված հիվանդությունները չեն արձանագրվել

ՌԿԳՅՈՒՆ ՔՅԻ ՈՒՍԻՐՈՒՄ
 ՎԵՐԱՍՏԱՎԱԾՆԵՐԻ ՄԻԿՐՈՑԵՐՈՒՄ
 ԳՆԱՀԱՅՄԱՆԱՅՈՒՄ
 ԳՆԱՀԱՅՄԱՆԱՅՈՒՄ
 ԳՆԱՀԱՅՄԱՆԱՅՈՒՄ
 ԳՆԱՀԱՅՄԱՆԱՅՈՒՄ

Էական թեմա	Բացահայտման համար	Բացահայտման անվանում	Էջը զեկույցում	Հղում զեկույցի բաժնում և մեկնաբանություններում
GRI 404: Վերապատրաստում և կրթություն 2016թ.	404-1	Մեկ աշխատակցի վերապատրաստման ժամերի միջին քանակը մեկ տարվա կտրվածքով	37	Մեր թիմը
	404-2	Աշխատակիցների հմտությունների արդիականացման ծրագրեր և անցումային աջակցության ծրագրեր	35-37	Մեր թիմը
	404-3	Աշխատակիցների տոկոսը, որոնք անցնում են կանոնավոր կատարողականի և կարիերայի զարգացման վերահայտում	37	Մեր թիմը
GRI 405: Բազմազանություն և հավասար հնարավորություններ 2016թ.	405-1	Կառավարման մարմինների և աշխատակիցների բազմազանություն	33	Մեր թիմը
	405-2	Կանանց և տղամարդկանց հիմնական աշխատավարձերի հարաբերակցություն	33	Մեր թիմը
GRI 406: Խտրականության արգելում 2016թ.	406-1	Խտրականության դեպքեր և ձեռնարկված շտկողական գործողություններ	35	Մեր թիմը
GRI 408: Երեխաների աշխատանք 2016թ.	408-1	Մանկական աշխատանքի զգալի ռիսկ պարունակող գործունեություն և մատակարարներ	11	Ռազմավարությունը և տեսլականը Մանկական աշխատանքը և հարկադիր աշխատանքի ցանկացած ձև արգելված է հայկական օրենքներով և «Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա» ընկերության քաղաքականությամբ
GRI 409: Հարկադիր կամ պարտադիր աշխատանք 2016թ.	409-1	Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի զգալի ռիսկ պարունակող գործունեություն և մատակարարներ	11	Ռազմավարությունը և տեսլականը Մանկական աշխատանքը և հարկադիր աշխատանքի ցանկացած ձև արգելված է հայկական օրենքներով և «Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա» ընկերության քաղաքականությամբ
GRI 412: Մարդու իրավունքների զննահատում 2016թ.	412-2	Աշխատակիցների վերապատրաստում մարդու իրավունքների քաղաքականության կամ ընթացակարգերի վերաբերյալ	35	Մեր մարդիկ
	412-3	Նշանակալից ներդրումային համաձայնագրեր և պայմանագրեր, որոնք ներառել մարդու իրավունքների վերաբերյալ դրույթներ կամ ստուգվել են մարդու իրավունքների պաշտպանության համար	-	Մատակարարների Ուղեցույցը, որը հանդիսանում է գնումների բոլոր պայմանագրերի պարտադիր հավելված, ներառում է մատակարարների լրացուցիչ պարտավորություններ՝ մարդու իրավունքների, աշխատանքային անվտանգության, մանկական և հարկադիր աշխատանքի, շրջակա միջավայրի վրա ազդեցության, կաշառակերության, տեղեկատվական անվտանգության և այլ պահանջներին համապատասխանելու:
GRI 413: Տեղական համայնքներ 2016թ.	413-1	Տեղական համայնքների ներգրավմանը, ազդեցության գնահատմանը և զարգացման ծրագրերին ուղղված գործողություններ	58-63	Աջակցություն տեղական համայնքներին
	413-2	Գործունեություն՝ տեղական համայնքների համար զգալի փաստացի և պոտենցիալ բացասական հետևանքներով	-	Գործունեություն՝ տեղական համայնքների համար զգալի փաստացի և պոտենցիալ բացասական հետևանքներով չեն բացահայտվել
GRI 414: Մատակարարների Սոցիալական Գնահատում 2016թ.	414-1	Նոր մատակարարներ, որոնք ընտրվել են սոցիալական չափանիշներով	18-19	Մեր մատակարարման շղթան Հաշվետու ժամանակահատվածում մատակարարների 100%-ը ստորագրել են Մատակարարների ուղեցույցը: Մատակարարների ուղեցույցը, որը հանդիսանում է գնումների բոլոր պայմանագրերի պարտադիր հավելված, ներառում է մատակարարների լրացուցիչ պարտավորություններ՝ մարդու իրավունքների, աշխատանքային անվտանգության, մանկական և հարկադիր աշխատանքի, շրջակա միջավայրի վրա ազդեցության, կաշառակերության, տեղեկատվական անվտանգության և այլ պահանջներին համապատասխանելու:
	414-2	Մատակարարման շղթայի բացասական սոցիալական հետևանքները և ձեռնարկված միջոցառումները	-	Հաշվետու ժամանակահատվածում մատակարարման շղթայի բացասական սոցիալական հետևանքներ չեն արձանագրվել
GRI 415: Հանրային քաղաքականություն 2016թ.	415-1	Քաղաքական նվիրատվություններ	-	«Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա» ընկերությունը քաղաքական նվիրատվություններ չի կատարում քաղաքական կուսակցություններին և / կամ անհատ քաղաքական գործիչներին

Էական թեմա	Բացահայտման համար	Բացահայտման անվանում	Էջը զեկույցում	Հղում զեկույցի բաժնում և մեկնաբանություններում
GRI 416: Հաճախորդների անվտանգություն և պաշտպանություն 2016թ.	416-1	Առողջության և անվտանգության վրա ապահովագրության և ծառայությունների ազդեցության գնահատում	16-17	Արտադրանքի որակը և սպառողների անվտանգություն
	416-2	Առողջության և անվտանգության վրա ապահովագրության և ծառայությունների ազդեցության անհամապատասխանության դեպքեր	17	Արտադրանքի որակը և սպառողների անվտանգություն
	417-1	Արտադրանքի և ծառայությունների մակշման և տեղեկատվության պահանջներ	17	Արտադրանքի որակը և սպառողների անվտանգություն
GRI 417: Մարկետինգ և պիտակավորում 2016թ.	417-2	Արտադրանքի և ծառայությունների մակշման և տեղեկատվության պահանջներին անհամապատասխանության դեպքեր	17	Արտադրանքի որակը և սպառողների անվտանգություն
	417-3	Մարքեթինգային հարողակցության պահանջներին անհամապատասխանության դեպքեր	17	Արտադրանքի որակը և սպառողների անվտանգություն Հաշվետու ժամանակահատվածում մարքեթինգային հարողակցության պահանջներին անհամապատասխանության դեպքեր չեն արձանագրվել
	GRI G4: Ոլորտի բացահայտումներ	G4 FP1	Գնումների ծավալի տոկոսը մատակարարներից, որոնք համապատասխանում են գնումների ոլորտում ընկերության քաղաքականությանը	18-19
G4 FP3		Աշխատանքային ժամանակի կորուստի տոկոսը, որոնք եղել են արտադրական վեճերի, գործադուլների և/ կամ լուրջ անբավարարումների, և այլ պատճառներով	-	Հաշվետու ժամանակահատվածում արտադրական վեճեր, գործադուլներ և/կամ լուրջ անբավարարումներ չեն արձանագրվել

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

- **«Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա» ՓԲԸ**
Թբիլիսյան խճուղի 8/3
Երևան 0052
Հայաստան
Հեռ.՝ +374 10 200 100
Էլ. հասցե՝ info-am@cchellenic.com
Կայք՝ <https://am.coca-colahellenic.com>
<http://happyvisit.am>
- **Հաճախորդների սպասարկման կենտրոն**
Չանգերի կենտրոն
Հեռ.՝ +374 10 200 100

